

ՀՍԽՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐՈՖ. Մ. ԱԲԵԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐՆ ՅԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՐԱՆՑ ՄԵՋ

(ԱՐՏԱՏԳՎԱԾ Ե ԴՍԽՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
I ՀԱՏՈՐԻՑ)

ՅԵՐԵՎԱՆ 1935

891.99.09

Ա - 13

89/99.09

Ա-13

1 MAR 2010
-6 NOV 2011

ՊՐԱԾ. Մ. ԱՐԵՆՑԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՄԵԶ

Գրքերի քանակ, գծում 200

- .01. 2013

Յերբ մի տարի առաջ*) այստեղ Վ. Բրյուսովի դասախոսության ժամանակ ռուսերեն լեզվով կարդացվեց Ֆրիկի «Դանդառը», շատերը զարմանում էին, թե մի՞թե՞ այդքան վաղ, 13-րդ դարի վերջում կամ 14-րդ դարի սկզբում (յերբ գտնում էին Ֆրիկին), կարող եր մեզնում առաջ գալ այնպեսի ազատախոհ բանաստեղծություն ազգերի և դասակարգերի և առհասարակ սոցիալական անհավասարությունների մասին: Դրա համար և վոմանք Ֆրիկին ավելի ուշ ժամանակի յերգիչ էին համարում: Թե 13-րդ դարում, յերբ ապրել է Ֆրիկը, իսկապես կարող եր հայերի մեջ այդպեսի բանաստեղծություն գոյություն ունենալ, այդ շատ պարզ տեսնում ենք իրական կյանքի այն պատկերից, վոր գծագրված է մեր հին առակների մեջ, վոր լնչպես ուրիշ յերկրներում, նույնպես և մեզնում 12 և 13-րդ դարերում առանձնապես սիրում և մշակում էին:


Բայց նախ, թե յներ և ինչպես է առաջացել առակների գրականությունը մեր մեջ, կամ առակները Հայոց գրականության առաջին շրջանում:

Ինչպես մեր ամբողջ հին գրականությունը, նույնպես և առակների տեսակը ծագում է մեզնում վոչ թե ազգային հողի վրա ժողովրդական մշակությամբ, այլ թարգմանությամբ:

Ն. Մառը**), — վորի սիրով կատարած յերկարամյա հետազոտությունն արժանացել մեր հին գրականության այս ճյուղին և վորի շնորհիվ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և ունենք վարդանայ առակների մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու, — ցույց է տալիս, վոր թեպետ և եզոպոսի առաջինը չի հիշատակվում հայոց հին գրականության մեջ, բայց հայերը հնուց անտի ծանոթ են յեղել նրա առակներին, վորոնցից վաթսուներեք ավելի թարգմանած ունենք գրաբար լեզվով և ուրիշ մի քանիսը հիշատակվում են մեր հին մատենագիրների մեջ: Բացի այդ 7-րդ դարում հավանորեն ճարտասանության կամ քերթողական արվեստի գրքերից

*) Այս հոգվածը տպագրվում է 1917 թ թիֆլիսում՝ Հայ Գրողների Ընկերության հրապարակային կոնֆերանսում ըմ կարգադատ դասախոսությունից վորոշ կրճատումներով և հավելումներով: ՀՍՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ցանկությամբ ավելացրած են առակների բնագրերը (վոր յես առաջ կարդացել եմ քրքրից), ու դրա հետևանքով կատարված են մի քանի փոփոխություններ: Նույն նյութի մասին տարրեր առաջ մի քանի անգամ կարդացել եմ Եջմիածնի, ճեմարանում հայոց գրականության դասընթացի մեջ, այլ և հետադարձ՝ Յերևանի Պետ. Համալսարանում: Մ. Ա.

**) Н. Марр «Сборники притч Вардана», ч. I, исследование. СПб. 1899. Նույնի, Ժողովածոյ առակաց Վարդանայ, մասն. Բ., բնագիր, ՍՊ. ՌՅԽԳ. Նույնի, ч. III, приложения СПб. 1894.



424 - 2010

Թարգմանվում են Ուլիսիանոս առակները, վոր Եզոպոսի առակները են հետադարձաբար լամբարգրություններ. այդ առակները ըստ Ն. Մառի, թվով տասնհինգ են յեղել, վորոնց վրա հետադարձաբար ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և յերեք: Հավանորեն 6—7-րդ դարում Թարգմանվում է նաև «Բարոյախոս» (Ֆելիոլոգ) կոչված գիրքը, վորի հեղինակը հայտնի չէ և վորի մեջ խոսվում է կենդանիների «բարոյքի», այսինքն բարքերի, բնավորության մասին: Այդ գրքին ծանոթ են յերևում հուլյնիսկ մեր կլասիկ հեղինակները՝ Ագաթանգեղոս, Եղիշիկ Կողբացի և ուրիշները: «Բարոյախոս» և Եզոպոսի առակները, Ուլիսիանոսի անունով, շատ սիրված են յեղել հնում հայ հեղինակներից: Հատ-հատ ուրիշ առակներ ևս հիշատակում են մեր հին հեղինակները:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից յերևում է, վոր 11-րդ դարում դպրոցներում աշակերտներին քերականության և ճարտասանության հետ սովորեցնում էին նաև «առասպելավարժություն», այսինքն աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել էյին տալիս առակներ, վոր և մի շատ հարմար վարժություն է յեղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Առակների հայկական ժողովածուներ, սակայն, հայտնի չեն, իսկ ժողովրդական առակները մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մտածել անգամ կարելի չէ մինչև 11-րդ դարու կեսերը և ավելի ևս ուշ: Ժողովրդական առակները, վորոնցից մի քանիսը մեջ են բերում հին հեղինակները, նույն բխտն են ունեցել, ինչ վոր մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, վոր գրականությունը դեռ յեկեղեցականների ձեռին էր. իսկ յեկեղեցականը, ինչպես հայտնի յե, իր կոչումով արդեն ընդունակ չէր զարգացնելու բազմակողմանի գրականություն, մշակելու թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առակներն են: Դրանք մեր գրագետ յեկեղեցականի կողմից վոչ միայն արհամարհված են յեղել իբրև գեղեցական, ուստի և անարժեք բաներ, այլ և իրենց ախարհիկ բնավորության պատճառով հալածված: Չանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «հաւահմայք», «հացահմայք», «հատահացք». մերժված և հաղորդության անարժան են համարվել նաև «ղրախաւք», «ղրատեք», շրջող տանէ ի տուն, հետաքրքիրք, առասպելախաւք»^{*)}: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ, ինչպես վոր սույն կրկին նշանակություններն ունեն համապատասխան հունարեն *mythos*, լատիներեն *fabula* բառերը: Միևեք Գոշը գրում է հաճախ «խրատե առակ», «յանդիմանե առակ» և այլն, «Ողոմպիանոս առակներից» 3-րդի խրատական մասն սկսվում է «խրատե առասպել»:

Այսպես ուրեմն հնում հալածված են յեղել ինչպես գուսանները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առակախոսները:

^{*)} Տես՝ Н. Марр, «Оборыки притя Вардана», т. I, Երես 280. Ժան. մի ձեռագրի նկարագրի մեջ:

Բայց և այնպես կյանքը կանգ չի առնում: 10-րդ դարուց ի վեր ավատական շրջանի յերեք վիճակների՝ ազնվականություն, հոգևորականություն և շինականություն կողքին տնտեսապես ու մտավորապես բարձրանում է քաղաքացիությունը: Բազմառույցայց իշխանության յերկրորդ շրջանի հարյուրամյա խաղաղության ժամանակ և հետո Հայաստանում զարգանում ու ծաղկում են վաճառական քաղաքները. բարգավաճում են յերկրի արտադրողական ուժերը, արհեստներն ու արդյունագործությունը: Շահաստանները, ինչպես՝ Անի, Արծն և ուրիշները, մեծ առևտուր ունեյին արեւելքի և արեւմուտքի հետ: «Ծով և ցամաք երկն՝ ր և առատանայր կրել ի սմա զգործելուն իւր», ասում է Ա. Լաստիվերտցին իր հայրենական Արծն քաղաքի համար. «բարեացն առատութեամբ պսակեալ», «վաճառականք փառաւորք». «Իբրև ակն մի պատուական՝ լուսազեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեկն գեղեցիկ, բոլորովին զարդարուն»: Այսպես և Անին և ուրիշները: Բնականաբար առաջ է գալիս դրամական տնտեսություն. արծաթը «յարգի եղև», ասում է Լաստիվերտցին, և այս վոչ միայն քաղաքներում ապրող հողատեր ազնվականների ու վաճառական քաղաքացիների համար, այլ և հոգևորականների: Դրամը մի նոր աստված էր դարձել. մարդիկ շահի յետևից էյին ընկնում: Նրանց հարստության աղբյուրը կազմում էր, սակայն, վոչ միայն առևտուրն ու արդյունագործությունը, այլ և աշխատավորների շահագործումը: Բուրժուազիան շահագործում էր մանր արհեստավորներին: Հողերը կենտրոնանում էյին ախարհական և հոգևորական իշխանավորների և վանականների ձեռին, վորոնց տնտեսության հիմքը կազմում էր յերկրագործությունն ու շինականների հարստահարությունը, թեկուզ և կային «հողագործ իշխաններ» և վանականներ, վորոնք իրենք անձամբ էյին մշակություն անում:

Այս տնտեսական-սոցիալական հարաբերություններն հետևանքով տեղի յե ունենում ճնշող և ճնշված դասակարգերի միջև մի սուր պայքար, վոր արտահայտված է առակների մեջ: Մինչ մի կողմից աշխատավորությունը գյուղում ու քաղաքում շատ նեղ դրության մեջ էր, մյուս կողմից մարդիկ փարթամացած, լինին ախարհական թե յեկեղեցական, սկսում են ուրախ-զվարթ, ճոխ կյանք վարել հակառակ հին ճգնավորական խրատակեցությունը: Հոգին, հոգևորը, վոր դեռ գերիշխող էր 10-րդ դարի յերկրորդ կեսին, յետ է մղվում, և առավելություն է տրվում մարմնին, մարմնավորին: Կրոնի մեջ դա արտահայտություն է գտնում Թոնդրակեցոց աղանդով, վոր յեկեղեցու հակառակ մի ուսմում էր:

Քաղաքների այս տնտեսական և մտավոր զարգացումը 11-րդ դարի յերկրորդ յեռորդում, արդարև, կանգ է առնում վորոշ կողմերում և նույնիսկ յետ է մղվում Սելջուկյան թուրքերի ավերածությունների հետևանքով. բայց Մելիք-Շահի թագավորելուց ի վեր (1072—1092) յերկրորդ խաղաղում է

և, բաժանված մահմեդական ու քրիստոնյա տիրապետների ձեռքին, նորից բարգավաճում է մինչև թաթարների արշավանքները, 13-րդ դարի կեսերը: Հարուստ քաղաքացիներն առանձին դիրք ձեռք բերելով՝ իրենց ուրախ կյանքի համեմատ և համար՝ իրենց արվեստի և գրականության պահանջն են ունենում: Հին գուսաններն ու գուսանական յերգերը, վոր մի ժամանակ ազնվականների ուրախության միջոցներն էին, այժմ ծառայում են նաև ճոխ քաղաքացիներին, վորոնք սիրում են յերգ ու յերաժշտություն և պար*):

Քաղաքացությունն ազդում է և հոգևորականության վրա: Գրականությունն և ուսումը դեռ յեկեղեցականի ձեռքին էին. բայց նա այժմ և հետո ստիպված եր բավարարել բարձրացած քաղաքացությանը: Ուստի 11-րդ դարի կեսերից առաջ է գալիս քաղաքացիական գրականություն: Հոգևորականի համար այլևս անպատշաճ չի համարվում, թեկուզ վողբի ձևով, յերգել աշխարհային կյանքի բարիքները և յերկրի, առանձնապես քաղաքների, ծաղկումն ու ավերումը: Նա սկսում է քաղաքացիների համար մշակել նաև նոր գրական տեսակներ՝ բժշկական, իրավաբանական և այլն. հորինում է ուսուցական քերթվածներ: Այս 12-րդ դարուց սկսած հոգևորականությունը մշակում է նաև առական**): Յեկեղեցականն իր կոչումով ուսուցիչ եր, վարժ մեկնաբանությունների մեջ գործադրվող այլաբանական ձևին. նա ամեն առասպելի մեջ էլ տեսնում եր այլաբանություն. ուստի բնական է, վոր նա սիրեր խրատական այլաբանությունը: Յեվ սիրելով այդ, վերջ ի վերջո պիտի սկսեր ժողովել և մշակել ամեն տեսակի այլաբանական պատմվածքներ, իսկապես ամեն տեսակի պատմվածքներ, վորոնց տալիս են խրատական այլաբանության ձևը, և վորոնք մեր հին գրականության մեջ հայտնի յեն մի ընդհանուր անվան տակ:

Առաջին հեղինակը, վորի համար հաղորդում են, թե գրել է առական, է Ներսես Շնորհալին (1102—1173), վորի համար Կիրակոս Գանձակեցին գրում է, թե «Արար և առակս խորհրդաբար ի զրոց, զի փոխանակ առասպելեաց զայն ասացեն ի գիտարբուս և ի հարսանիս» (Պատմութիւն Հայոց Կիրակոսի Գանձակեցւոյ, Խիֆլիս, 1909, յեր. 140 հտ.): Շնորհալու անունով մնացած կան 120 «Առակք վասն ուրախութեան մարդկան»: Դրանք, սակայն, վոտանավորով հանելուկներ են և վոչ առական:

Հենց վոր յեկեղեցականն սկսում է մշակել ժողովրդական գրական տեսակը, թեկուզ այնպիսի հասարակ տեսակը, ինչպես է հանելուկը, նա արդեն ակամա յենթարկվում է ժողովրդական վողուն, բանեցնելով ժամանակի խոսակցական լեզուն և հետաքրքրվելով յերկրավոր և իրական

*) Այս մասին մանրամասնություններ տես Մ. Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական յերգեր» աշխատության մեջ՝ տպված Պետ. Համալսարանի «Տեղեկագրի» № 2-3, 4 և 6. ապա և առանձին գրքով, Յերևան, 1931.

**) Այս մասին, տես Մ. Աբեղյանի «Համառոտություն հին գրականության պատմության» (գաղափար, Յերևանի Փող. Համալսարանի, 1921—22 ձև. տարվա), Յերևան, 1923.

բաներով ու կյանքով: Ինչքան էլ Շնորհալին խորշում է աշխարհական վողուն, բայց և այնպես մեր ժողովրդական բանահյուսությունը թողել է արդեն իր ազդեցությունը նրա հանելուկների վրա:

3

Իսկական առակների առաջին ժողովուրդն ու խմբագրողն է Մխիթար Գոշը (+1213թ.), վոր յերիտասարդ հասակում ժամանակակից է յեղել Շնորհալուն: Ն. Մաքը կասկածում է, թե Գոշի անունով հայտնի առակները («Առակք Մխիթարայ Գոշի», Վենետիկ, 1854. յետևից տպված են նաև «Առակք Ողոմականու») նրանք՝ Մխիթար Գոշինը լինեն. բայց նրա կասկածը չի հաստատված համոզիչ հիմունքներով: Վոր Կիրակոս Գանձակեցին, — վորը վոչ թե Մխիթարի աշակերտն է, ինչպես սխալմամբ դնում է Մաքը (С. П. Г. I, յեր. 66 հտ.), այլ Վանական վարդապետի աշակերտը և Մխիթարին վոչ ժամանակակից, — վոր Կիրակոսը չի հիշատակում, թե Մխիթարն առակներ է գրել, այդ իհարկե չի կարելի իբրև հիմք ծառայեցնել, ինչպես անում է Ն. Մաքը, կասկածելու, թե Մխիթարն է հեղինակ նրա անունով հայտնի առակների: Գանձակեցին նպատակ չի դրել Մխիթարի բոլոր յերկերի ցուցակը տալ և վոչ նրա բոլոր յերկերն էլ նա հիշում է, ինչպես ի միջի այլոց նա չի հիշատակում նաև Մխիթարի «Դատաստանագիրքն» ևս:

Մաքի կասկածի համար, սակայն, իբրև հիմունք ծառայել է նաև այն, վոր Եջմիածնի Մատ. մի ձեռագրի մեջ (№. 2238), — վոր ժողովածու յե զանազան յերկերի (մասամբ ամբողջապես արտագրված, մասամբ հատվածորեն), — ի միջի այլոց կա վերջում Մխիթար Գոշի առակների վերջին մասը՝ «Առակք ստեղծականք», վորի համար իբրև հեղինակ, վերնագրի մեջ դրված է Յովհաննես Մործորեցին և վորի վերջում կա հետևյալ հիշատակաբանը. «Եւ զվերջացեալս ի բարեաց գործոց զտարտամ գրիչս զՅովհաննէս Մործորեցի և տեղեալ Երզնկացի: Իսկ այժմ՝ Մործորեցի: Աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս, և զիման ամենայն: Ի թվականիս Փրկչին ոյժգ: Եւ զպիտակ պէտս Գրիգոր զվերջին գծող յիշեալ աղաչեմ»: Նույն տեղում ներքին լուսանցքում. «Իսկ ըստ հայոց էճիգ աւարտ եղև գիրքս»: Այս մի հիշատակարան ևս, վոր ըստ Ն. Մաքի ժողովածուն կազմողինն է: Վերևում բերված հիշատակարանից Ն. Մաքը յեզրակացնում է, թե Մործորեցին հիշված ժողովածուն կազմողը չէ, այլ առակների արտագրողն է: Վոր ժողովածուի մեջ Մործորեցին դարձել է առակների հեղինակ, այդ իբր նրանից է, վոր ժողովածուի մեջ սկզբնապես առակների համար հեղինակ հիշված չի յեղել: Վոր ժողովածուի մեջ առակների համար հեղինակ հիշված չի յեղել, այդ իբր նրանից է, վոր Մործորեցու արտագրածը, վորից ոգտ լել է ժողովածուն կազմողը, այդպես է յեղել: Վոր Մործորեցու արտագրածի մեջ հեղինակ հիշված չի յեղել, այդ էլ ցույց է տալիս, վոր Մխիթարի անունով հայտնի առակները հին ժամանակ անանուն են յեղել: Հետևաբար, հետագայում շատ ուշ ժամանակ, արտագրողներն այդ առակները վերագրել են Մխիթարին:

Այսպիսի յենթադրություններով, սակայն, և այն հանգամանքով, վոր առաջինի ձեռագրերն են հետին դարերի յեն, կարելի է անստույգ համարել Մխիթարի հեղինակ լինելը: Բանը վոր յենթադրության և հասնում, կարելի է շատ տեսակ-տեսակ յենթադրություններ ել անել: Քանի վոր մեր ձեռքը չի հասել Ծործորեցու արտագրածը, կարող ենք յենթադրել, վոր դա ունեցած է յեղել Մխիթարի անունը, բայց սկզբի թերթը կարող էր մաշված կամ պոկված լինել, ուստի և հիշված ժողովածուն կազմողն առաջինն անանուն գրած լինել իր ժողովածուի մեջ: Կարող էր ժողովածուն կազմողը, քանի վոր բոլոր առաջինները չեն արտագրում, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ չէին առաջինների հեղինակի անունը: Նա կարող էր նույնիսկ գրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ թե անդուշտությամբ Մխիթարի տեղ Ծործորեցի դնել, և այլն և այլն:

Այսպես ուրեմն, կարելի է լուրջ յենթադրության վրա հիմնվելով հարցական թողնել այդ առաջինների հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրչակների ձեռով ավելացրած համարել Մխիթարի անունը, վոր կա ամբողջական ձեռագրերների վրա, թեկուզ գրանք շատ հին չլինեն:

Թե Մխիթարի անունով մնացած առաջինները նրանք են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակութունն էլ, վոր, ինչպես Ն. Մառն ել գիտում է, տանում է մեզ այն ժամանակը, «յերբ հայերը դեռ քաղաքական ազատութուն ունեին և մահմեդականներից ավելի ուժեղ էին զոլում իրենց»: Յեղ այդ հենց Մխիթար Գոշի ժամանակն է, 12-րդ դարի յերկրորդ կեսին, յերբ հայերը թե արևելքում և թե արևմուտքում—կրկնկրկնապես շատ ավելի ուժեղ էին, քան մահմեդականները:

Կանգ առնենք մի քանի ուրիշ հանգամանքների վրա ևս: Այդ առաջինների հեղինակը շատ հմուտ մարդ է յեղել, ինչպես յեղել է և Մխիթարը: Նա գիտակցաբար վերաբերվելով իր գործին՝ հարկ է համարում մեկ-մեկ ծանոթություններ տալ իր կատարած գործի և ընդհանրապես առաջինների մասին իշխել մի գրական տեսակի: Այդ ծանոթություններից հենց իմանում ենք, վոր այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն է մեր մեջ:

Ամենից առաջ տեսնում ենք, վոր առաջինը ժողովելն ու գրելը դեռ անպատշաճ է համարվում. ուստի և հեղինակը բացատրում է, թե ինչու յե ինքը գրել. «Թէպէտ անըմբռն (անպատշաճ Մ. Ա.) ասացեալքդ կարծի, սակայն թանձրամտաց առաւել ախորժելի երևին, որոյ աղադաւ սակաւ յօժարեցաք գրել» (Մխ. Առ. ԻԵ, յեր. 30): Ապա այդ գործն ուրիշները ծաղրելի յեն համարում, և հեղինակը խնդրում է, վոր չծաղրեն իրեն: Ամեն անգամ վոր մեր հեղինակները մի նոր բան են մտցնում գրականության մեջ, ստիպված են կամ ապացուցանել, թե թույլատրելի է իրենց արածը, կամ խնդրել, վոր չծաղրեն իրենց: Այսպես, Կորյունը մեր գրականության սկզբում դեռ ստիպված է յերկար ու բարակ ապացուցանել, թե վոչ միայն թույլատրելի է, այլ և հարկավոր է Մեսրոպ Մաշտոցի նման մարդկանց վարքը գրել: Ներսէս Շնորհալին իր «Ողբերգութեան» հիշատակարանում

ստիպված է ապացուցանել, թե կարելի է մեր այժմ սովորական դարձած ~~ստիպված~~ չափությամբ, վոր այն ժամանակ գործածվում էր միայն աշխարհիկ յերգերի համար, բանաստեղծութուն հորինել նաև հոգևոր բաների մասին:

Յովհան Մամիկոնյանը ժողովրդական գրույցներից ու յերգերից խմբագրելով «Տարոնոյ պատերազմը», վերջը գրում է. «Յորժամ դարագրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեսցի ծաղր ու մեք»... Նույն խոսքով Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» համար, վոր նորություն էր մեր գրականության մեջ, գրում է. «Եւ արդ մի ոք պարսաւեսցէ զասացեալս, զի թէ տխմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպականս ի սմանէ լցցէ. զերկոցունցն պատրաստ եմք սիրով ընդունել զկամսն» («Դատաստանագրք» Վաղարշապատ, 1880 «Նախադրութիւն», յեր. 17): Ծիտ աշուես և նույն Մխիթար Գոշն առաջինների համար գրում է վերջաբանում. «Եւ արդ մի ոք ծաղր առնիցէ զմեզ, զի առնուի ի սոցունց ի բուլսարուի իւն և յասացումս ի դէպ համարեցաք, քան զսուրհաւանացն՝ Վարիլ սովորութեամբ: Եթէ հաճոյ ոմանց թուիցի, տեսնէ շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն մեզ արասցէ սիրով նորին» (յեր. 153):

Մեծ դժվարությամբ ուրեմն, նույն խոսքով առաջի տեսակը մոռաք և գործում յեկեղեցականի գրականության մեջ: Դա ծաղրի առարկա յի, զի դրա առասպելն աշխարհիկ բնավորություն ունի. և յեթե յեկեղեցականը մշակում է այդ, վորովհետև թանձրամտներին ախորժելի է առաջինների առասպելը, և դրանով հեշտ է սովորեցնել ու կրթել:

Մխիթար Գոշն առաջինների մեջ տեսնում է բնականաբար յերկու մաս բռն պատմվածքը և խրատական յեղրակացությունը:

Պատմվածքը,—վոր նա կոչում է առաւ, գաղափար, ճիմտեղ, եղանակ և այլ բառերով,—ըստ Մխիթարի՝ լինում է յերեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առաջինը (բարոյք, բարք = բնություն բառից, վորից և «Բարոյախօս» գրքի կոչումը) առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առաջինների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, յերբեմն և բույսերին, իբրև գործող առձեռի. խոս ստեղծական առաջինն առնված են մարդկանց կյանքից, գործող առձեռը մարդիկ են:

Խրատական յեղրակացությունը,—վոր հեղինակը կոչում է խրատ, նօսնակ, նօսարտքիւն և այլ բառերով,—յերկու տեսակ է՝ աշխարհիկ և յեկեղեցական. «Դիցուք և սակաւաք առաւք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զճշմարտութիւնն աշխարհօրէն և եկեղեցականապէս» (Մխ. Առ. յեր. 128):

Առաջինների յերկու մասերից հոգևորական հեղինակի համար բնականաբար ավելի կարևոր արժեք ունի այս յերկրորդը, խրատական մասը, այն էլ ավելի եկեղեցական մեկնությամբ, վորովհետև հեղինակը ցանկանում է, վոր խոսակցության ժամանակ մեջ բերվեն այդպիսի մեկնությամբ առաջինը, քան աշխարհականների սովորությամբ վարվել, այսինքն առաջ-

ները լուրջ աշխարհական մեկնություններ պատմելու Ուստի խրատները մեջ կարևոր տեղ բռնում են հոգեշահ խրատներն ու հոգևոր առաքելությունները: Բայց Մխիթարի նման մեկը չէր կարող անուշադիր մնալ դեպի կենցաղական խրատը, առարկա ընկերական հարաբերությունները, սոցիալական և ազգերի հարաբերություն և նման խնդիրները կամ «ճշմարտութիւնն աշխարհօրէն»:

Մի անգամ, վոր հեղինակը համար առակի մեջ եյականն է առակի «ճշմարտութիւնը», ուստի և նա առակը մշակում է այնպես, վոր կարևոր տեղ բռնի «ճշմարտութիւնը»: Կը նշանակե՛ առակը հորինվում է վոչ իբրև ինքնուրույն բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցական, դիդակտիկական յերկ, վոր նպատակ ունի ակործելի ձևով խրատել և ազդել: Դրա համար առակի առասպելն այնպես է հորինվում, կամ փոփոխվում (յերբ ուրիշ աղբյուրներից է առնված), վոր հարմարվի բարոյակրթական մասին, կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, վոր յերբեմն նույն իսկ խրատական մասն ալիլի մեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Ուստի սակավ ենք գտնում բանաստեղծական նկարչություն, կենդանիների և մարդկանց բնավորությունն եյական գծերի բնորոշում և վոչ էլ միշտ արագ և ուժեղ գործողություն ենք գտնում սեղմ ու պայծառ պատմվածքի մեջ, վոր առակները կենդանությունն է կազմում: Արդարև, Մխիթար Գոշն էլ սեղմ ու հակիրճ է, բայց վոչ միշտ պայծառ ու կենդանի: Սովորաբար մի յերկու ընդհանուր գծեր է տալիս նա և ապա իսկույն անցնում է խրատին: Յերբեմն էլ պատմվածքն այնքան կարճ է և այնպիսի, վոր դժվարություններ կարելի չէ յեղրակացություն հանել, կամ հանած յեղրակացությունը շատ թույլ կապով է կապվում պատմվածքին, կամ համապատասխան չէ նրան:

Հեղինակը, սակայն, իր խրատը բավական չհամարելով դեռ գրում է «Ձառեալ նշանակալ չափաւորապէս համեմատեցաք՝ պատճառս տալով տեսողաց բանին նմանապէս զթերին լցուցանել» (Մխ. Առ. յեր. 30): Կը նշանակե՛ Մխիթարն առակն ասողին ազատ է թողնում մեկնության թերին լրացնել, ձեռն ինչպես նա իր Դատաստանագրքի «Կատարեալ» ընթերցողի համար ևս ասում է, թե՛ «զպակասն ի սմանէ ինքն լցցէ»: Այստեղ էլ, ուրեմն, առակների և Դատաստանագրքի հեղինակը նման ձևով է մտածում:

Բնականաբար պիտի սպասենք, վոր Մխիթար Գոշն առակների մեջ ևս նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ վոր Դատաստանագրքի մեջ: Այստեղ Նախադրության մեջ պատմվում է, թե դատավորները պիտք է ուղիղ դատաստան անեն («Դատ.» յեր. 28) և ապա (յեր. 32) գրում է. «Եւ թէ ոսոխքն յատենի անդ բանակուիւ լիցին մի տայցեն թոյլ, այլ սաստեսցեն... Ուսցին և դատախազքն, թէ ոչ վասն վիճոյ գան յատենան... ըստ կարգի տայցեն խօսել ոսոխացն»: Այս յերկու գաղափարն էլ, դատավորի արդար մարդ լինելու հետ միասին, արտահայտված ենք գտնում մի առակի մեջ:

Հաւալ գրոյն տառարակի քակտեալ, և իւր շինեալ, և յեղև նոցա երթալ առ արգալ արագիլ ի դատաստան, և անդ զմիմեանս նախատէին և պարծէին, տառարակ ողջախոհութեամբ, կրօնաորութեամբ, և հաւալ պահօք քառասորէիլք, և նախատի ոմն կեղծաւորութեամբ, և ոմն զայլոյ ուտելոյ զվաստակն իսկ դատաւորն երկուցն սաստէ և հարցանէ զհաւալ, թէ ընդէ՞ր քակտիցիւր, եւ նա ասէ. Շնորհածոյ նշան ինչ ոչ տեսի, և վասն այն տոյ ինձ: Հարցանէ դարձեալ. Դե՞ռ էիր եղեալ զոր առեր: Եւ նա ասէ՝ ոչ:—Եւ կամ ոչ էր երկու հեծան եղեալ ի վերայ սիմեանց, եւ ասէ՝ եղեալ էր: Հրամայէ անդրէն դարձուցանել, նա և տուգանս եւս տալ:

Ձգատաստան ուղիղ հրամայէ առակս դատել, և ոչ յատենի մեծարանել, և կամ թշնամանել զմիմեանց դատախազաց: Եւ դարձեալ զի զոր չիցեմք եղեալ՝ ուսուցանէ չառնուր, և զշնորհածոյ յայլոյ՝ թէ և յորի իցէմ, չքակել:

Մխ. ձԽ. 118.

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, թե ինչպես վոսոխները՝ Հավալն ու Տատարակը, դատաստանին յեն գնում արդար Արագիլ մոտ. բայց նրա առջ իրար նախատում են, իրար հետ վիճում են և ամեն մեկն իր արժանավորությունները պարծենում: Դատավորն յերկուսին էլ սաստում է, ապա հարց ու փորձ անում և դատաստան կտրում:

Տեսնենք մի ուրիշ գրեծ էլ: Դատաստանագրքի մեջ (Նախադրություն, յեր. 29) Մխիթարը պատմվում է, թե «Դատաւորն մի լուիցէ զոսոխին կամ զդատախազին բանսն միայն»... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝ չպիտի դատ անի: Առակներից մեկի մեջ ասում է, թե անընտրող դատողները՝ լինեն թագավոր, իշխան, դատավոր, թե յեկեղեցու առաջնորդ, «ամփորձապէս դատապարտեն», այսինքն՝ առանց քննելու դատապարտում են նույն իսկ արտաքին տեսքից կամ համբավից (այսինքն ուրիշներից լսելով). և առակախօսը պատմվում է, թե չպետք է լի տեսնեն կամ ի համբաւէ դատել:

Յանմոյց որ եհար զունապի՝ կարծելով զնա դմիկ, որոյ զայրացեալ ասաց. Ո անագորոյն, զտունի ի պտղոյ արծառն է ճանաչիլ, և ոչ ի տեսնել:

Նշանակ բիրէ առակս զանընտրող դատողս՝ զթագաւորս և զիշխանս և զդատաւորս և զառաջնորդս եկեղեցոյ՝ զոսոս յանդիմանելով, զի ամփորձապէս դատապարտեն. զի ճշդիւ գիտելի է ի գործոց նոցա (ըստ որում տէրն իսկ ասաց, թե ի պտղոյ նոցա ծանրից զոսոս) և վոչ ի տեսնել կամ ի համբաւէ դատել. որով և բազում քնաս գործի՝ դարիս իբրեւ զչարս խոշտանգելով:

Մխ. ԺԸ. 19.

Նկատենք և հետևյալը:

Մխիթար Գոշն առակները, վորոնց թիվը 190 է, խմբագրված են, ինչպես վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին իրոք յեղել է Մխիթարը: Դրանց համար նա ոգտվել է եղողոսի առակներից ու Բարոյախոսից, ինչպես և այլ գրավոր աղբյուրներից ու ժողովրդական առակներից: Անպայման կան և այնպիսիները, վոր հեղինակի իրեն ստեղծածն են: Նա, ինչպես յերևում է, մեծ նշույթ է ունեցել ձեռի տակ, բայց ամեն ինչ վոր ունեցել է, չի գործադրել. «Ձբազումս ի գիտելիաց և յանդիտելիաց թողաք իբր համազրս յօրինակս և յառակս» (Մխ. Առ. յեր. 29): Բայց ամեն ինչ, վոր նա առել է իր ժողովածուի մեջ՝ շատ վորոշ կարգով դասավորել է ըստ նշույթի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ յերկինք

ու յերկիր և յերկնայիններ և ապա՝ բույսեր, լեռներ, կենդանիներ ու մարդիկ: Ամբողջի մեջ յերևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու վոգին: Այսպիսի միակերպութուն չունեն Վարդանա առակները, վորոնք և մի մարդու գրչից չեն գուրս յեկած և վոչ ել մի դարու արգասիք են:

4

Ինչպես են ծագել Վարդանա առակները, վոր մեր միջնադարյան գրականության մեծ հարստությունն են կազմում: Այս մասին հղարկելով Ն. Մառի վերևում հիշված մեծ աշխատանքին, այստեղ միայն հետևյալը: Վարդան Այգեկցին, վոր Վարդանա առակները նախահայրն է, Մխիթար Գոշից մի սերունդ կրտսեր է: Մխիթարը վախճանվում է 1213 թ. «խորին ծերության» հասակում, «ալեորեալ լի առուրք»¹, իսկ Վարդանն այդ ժամանակ արդեն անվանի յեր դարձած էր բանաստեղծական քարոզներով, վոր ուղղում էր հարուստ քաղաքացիների և վաճառականների դեմ: Բայց նա, յերևի իր քարոզների պատճառով, ստիպված է լինում փախչել իր սիրած Դուբից (Կիլիկիայում): Յերկու տարի թափառելուց և շատ նեղություններ կրելուց հետո՝ նա 1212 թվին ապաստան է գտնում Սև լեռան վրա կամ մոտերը գտնված մի անապատում, վոր կոչվում էր Այգեակ: Այստեղ նա ապրում է մինչև խորին ծերություն, ուստի և կոչվում է Այգեկցի: Նա իր կյանքի յերկրորդ մասի ընթացքում պարապում է գլխավորապես գրականությանը: Նրա գրական ամենամեծ նշանակությունն այն է, վոր նա, ինչպես Ն. Մառը ցույց է տալիս, ստեղծել է քարոզների մի առանձին տեսակ, վորոնց մեջ գործ է ածում առակներ, վոր նրա գաղափարները պարզում և հասկանալի յեն դարձնում:

Նրա գործածած առակները դուր և գալիս և բերանացի ու գրավոր տարածվում են, և, ինչպես կարծում է Ն. Մառը, ամենայն հավանականությամբ նա ինքը կազմած պիտի լինի առակների մի յերկու փոքր ժողովածուներ, բայց գուցե և ուրիշները նրա ճառերից հանել են առակները և ի մի խմբել, վորով և առաջացել են Վարդանայ առակները:

Այդ առակների ժողովածուները, սակայն, անփոփոխ չեն մնում, այլ մինչև 17-րդ դարի կեսերը յենթարկվում են մեծ զարգացման: Հետզհետե Վարդանին շատ նմանողներ են գուրս գալիս և կազմում են զանազան նոր ժողովածուներ թե՛ Վարդանի առակներից և թե՛ ուրիշ աղբյուրներից: Այսպես զարգանում են առակների ժողովածուները, զի դրանց համար պահանջ կար: Իրանք հարկավոր եյին, նախ՝ քարոզության համար և պետք է ոգնեյին քարոզիչներին, թե՛ վոր հոգեհախ խրատի համար ինչ առակ կարելի յեր պատմել: Առակների ժողովածուներն, ուրեմն, ծառայում եյին նույն գործնական նպատակին, վորի համար և կիրառել էր Այգեկցին: Ապա, ինչպես սկզբում ասվեց, առակներ ստորեկնում եյին դպրոցներում և զանազան ձևերով վերամշակել եյին տալիս. ուստի և կազմվում եյին նոր ժողովածուներ հաճախ վերամշակված ձևերով: Բայց վոր գլխավորն է՝ 12—13-րդ դարերում ամեն տեղ առհասարակ, այնպես ել մեզնում, քաղաքացիները սիրում եյին պատմվածքներ, առակներ ու զրույցներ և առասպելներ:

Այս վերջին հանգամանքը պատճառ է դառնում, վոր շուտով Վարդանա առակների ժողովածուներն մեջ (Ն. Մառի խմբագրությունը բ. մասն «Ժողովածուք առակաց Վարդանայ») մտնում են վոչ միայն առակներ սովորական մտքով, այլ և ամեն տեսակ պատմվածքներ, վոչ միայն գրքերից, այլ և ժողովրդի բերանից, վերջից ստանալով մի հոգեհախ խրատական մաս, վոր շատ անգամ բռնազրոսիկ կերպով կցված է բուն պատմվածքին: Այսպես «Միամիտ գողը» գվարձալիքը:

Երկու գողը դնացին ի մեծատան միում յերդիք և կամէին գողանալ գինչս նորա: Եւ էր լուսնկայ, և իմացաւ այրն, որ գողքն ի յերդիքն եկին: Եւ ասէ կինն ցայրն, թէ՛ Ասէն դանձս և դրաճն և դուժաշն ուստի է եկեր քեզ: Եւ ասէ այրն. Երթայի ի գողութիւն ի գիւղերի մեծատանց երթիք ի լուսնկայ լուսոյն, որպէս որ այժմ կայ. և շուք լուսնկին յերդից ի վայր ցայթէր գերթ հիմայ. և ես դերկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի և ի վայր կիջնայի ի տունն և բան մի կասէի. որ ինչ գեղեցիկ դուժաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերհար և առնէի ի շուքն կապէի և դիս այլ ի հետ դուժաշին. և շուքն դիս ի վեր կուռնանէր ի տունն (տանիսն). և այսպէս գամէն շահեր եմ: Իբրև լսեցին գողքն դրանս զայս, խիտ ուրախացան և հաւատացին պատրդական բանիցն և գրկեցին զշուքն, որ ի վայր իջնուն, անկան և խկաց թափեցան: Եւ այրն յարեաւ և ետգան դնոսա:

Յուցանէ առակս, թէ՛ մարդն որ գողանայ և ստանայական բանին հավատայ, նա որպէս այն գողքն կորնչին. և պատճառն ի կնոջն ելաւ, որ այն գողքն յերդից ի վայր անկան կինն ի կողն է, և կողն ծուռ է և ինքն չար է:

Առ. Վարդ. Բ., 298. ՄԱԷ

Նույնպիսի յե և «Ճուհոյ աղայ» գվարձալիքն իր մեկնաբանությամբ, վոր խրատ ել չե:

Ճուհուն աղան դտաւ դեկան մի կարմիր և ձայնեաց մեծաձայն, թէ՛ ես փող մի գտայ: Մի մարդ մի անդ կար և ասաց, թէ՛ Այդ փողդդ առ քեզ. Դ. փող և տուր: Ասաց՝ Ձէ՛ Ասաց՝ առ Ժ. փող: Ասաց՝ Ձէ՛ ասաց՝ Առ. Դ. փող: Ասաց՝ Ձէ՛: Եւ նայ ետ և նայ «չէ» ասաց: Եւ յորժամ թրեցաւ Ֆլորու մի փող, ասաց ճոհոյն աղայն, թէ՛ Սառնչէ քան դէշ, որ տամ: Եւ նայ դուայ: Եւ նայ ասաց, թէ՛ Հաչէ քան զշուն, որ տամ: Եւ նայ հաչեց: Եւ յայժամ ասաց ճոհոյն աղայն, թէ՛ Դու շուն և էշ խելաւքդ գիտն, որ այս կարմիր դեկան է, և ես ոչ գիտեմ:

Յուցանէ առակս, թէ՛ ի մանկանց և ի աղայոց մէջն կայ, որ գմեծաեծ մարդերն խաբեն և ոչ տարկուին և խաբուին. և կան յաջաբարձի մարդիք և մանուկ աղաք և ճշմարտք, որ զստանայ ծաղր առնեն և ոչ խաբուին և ոչ կորնչին:

Առ. Վարդ. Բ., 175. ՃԽԸ.

«Երէց ասորի և երկտասարդ հայ» պատմվածքը, վորի մեջ ասորի քահանայի տգիտությունն է ծաղրում:

Երէց մի ասորի բարի և իմաստուն և մարդ մի հայ կուռնէին ի հաշիւն, որ կայր ի միջի իւրեանցն: Ասէ հայն. Ասումս զքարն և կոտրեմ դ. լը. ասումս քեզ, որ կայ ի բերանդ: Զայրմացաւ այն երէցն ընդ նորա ասելն. դնաց առ իրիցիկինն. պարկեցո բորդ վեր*) և ասէ. Օլաւի, առ մոմեղէն, առ եկ տես ի բերանս. թէ՛ քանի աղակ կայ ինձ: Եւ երէցկինն զլուսն ու համրէց. նայ այն էր, զոր նայ էր ասացել. լը, աղակ. զոր նայ էր ասացել: Գայ շուտ մի առ հայն և ասէ. Փառք աստուծոյ, կամ իմաստուն մարդ ես գուն կամ սուրբ հոգին ի քեզ բնակեալ է. դու զինչ գիտացել, թէ՛ իմ ասումս քեզ, լը, էր: Եւ նայ ասէ. Յիմ ասումս քեզ գիտացի: Եւ շուտ հաշտեցան:

*) Այսինքն՝ «Պառկեցաւ պորտ ի վեր», Մ. Ա.

Յուզանէ առակս, թէ յիւ մարմնոյն զձեռտ զիտացի, որդեակք իմ. զի հասարակած է մեղքն և պատերազմ սատանայի, և միապէս կորուսանէ զամենայն մարդ՝ զժոխոցն առնէ:

Առ. Վարդ. Բ. 63, ԽԴ.

«Հարսն և սկեսուր և սկեսրայր» գեղեցիկ առակի մեջ շատ պայծառ ու նկարեն յերևում և բնութանիքի մեջ հարսի ստրկական վիճակը բռնակալ սկեսրի և սկեսրայրի ձեռի տակ, վորոնց խոնարհ ծառան է նա և հլու հնազանդությամբ ու մեծ համբերությամբ պարտավոր և կատարել նրանց ամեն անմիտ պատվերները:

Նոր հարս մի եղև խոնարհ և համբերող. և կամեցան փորձել զնայ սկիսուրն և սկեսրայր նորա: Ասէ մին, թէ՛ Զգուռն փակէ: Եւ միւսն ասէ. Բաց. Մին ասէ. Ել փակէ զգուռն. հողմ է. Եւ իբրև զնաց և փակեաց զգուռն. և միւսն ասէ. Ել բաց զգուռն, զի ծուխ է: Եւ սկըսան ասել՝ փակէ և բաց: Եւ նայ սկսաւ փակել և բանալ կարգաւ և ասէ. Քեզ փակեմ և զորալ բանամ: Եւ յերկարեաց և ոչ բարկացաւ:

Յուզանէ առակս, թէ առաքելաքն և մարդարէքն մեծ համբերութեամբ և հեղութեամբ քարոզեցին աշխարհի և մեծ սպառնալաւք փակեցին զժոխքն, զի մի մտցն ի նայ. և բացին զարքայութիւն ողորմությամբ աստուծոյ, և ճնորհաւքն, զի սեղաւորք զիմեն և մտցն ի նայ յուսով ապաշխարութեամբ. այս է փակելն և բանալն:

Առ. Վարդ. Բ. 67, ԽԵ.

Վարդանա Առակներն այս բազմազան մեծ նյութը (ն. Մառի խմբագրությամբ 485 առակ հաճախ իրենց վարիանտներով), վոր մինչև 19-րդ դարը շատ սիրելի յե յեղել վոչ պահանջկոտ ընթերցողներին համար, զբախտաբար իր զարգացման կեա ճանապարհին կանգ և առել, անպայման այն քաղաքական գրության պատճառով, վոր ունեն չայաստանը 14—17-րդ դարերում: Մի Թլուրանցի կամ Աղթամարցի, իր խաղաղ անկյունը քաշված, կարող եր իր սիրո և բնության յերգը հնչեցնել և զարգացնել այդ դարերում. առակները գեղեցիկ մշակելու համար, սակայն, բավական չեր մի փոքրիկ խաղաղ անկյունը: Դրա համար պետք եր, վոր խաղաղ ապրիլիս լինել և ավելի պահանջկոտ լինել այն հասարակությունը, այն քաղաքացի բնակչությունը, վորից ծագել եյին առակները և վորի համար պետք և արվեստավոր նոր հորինվելին զրանք: Այդպիսի հասարակություն և այդպիսի պահանջ, սակայն, չկար և չեր կարող լինել 14—17-րդ դարերում, յերբ Հայաստանի քաղաքներն ավերվում եյին և ժողովուրդն ընդհանրապես ավելի հետադիմում եր, քան առաջադիմում: Այդ պատճառով և առակների ժողովածուները մնում են իրենց նախնական ձևով, բավարարություն տալով միամիտ ընթերցողներին:

Ստեղծագործական հանճարը, կարելի յե ասել, շատ քիչ է ձեռք տվել այդ ժողովածուների մեջ ամբարված բազմազան նյութերին, զրանք վորոշ ուղղությամբ բանաստեղծորեն վերամշակելու համար: Թեպետ և կան ընտիր ու կենդանի վոճով համեղ ու սրամիտ պատմվածքներ, ևս ավելի յերկրորդ կամ յերրորդ խմբագրությամբ, բայց այդ ամենը պատահաբար և կատարված:

Նույնպէս պատահաբար և վոչ գիտակցաբար ժողովրդականից ծագող առակների և զրուցաների հետ մտնում և նաև ժողովրդական լեզուն և համ-

կարանությունը և ընդհանրապես ժողովրդական կյանքն ու վոգին: Դրանց ազդեցության տակ, զրական ծագում ունեցող առակներն ևս, վորոնք մաքուր գրաբար լեզվով են, յերբեմն վերամշակվում են կենդանի ժողովրդական լեզվով ու ձևով. զործողությունը դառնում և ավելի լրիվ, պատմվածքն ավելի շարժուն և լեզուն խոսակցական ու զվարթ: Նյութն ուրեմն արտաքին ձևով կենդանանում և ժողովրդական բնավորություն և ստանում. բայց այդ արտաքինի հետ ընդհանրապես նաև ներքինն ստանում և ժողովրդական վոգի:

Այսպիսով ուրեմն առակները դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարրերը մեր հին գրականության մեջ մտցնելու, և զրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում և ժողովրդին, յենթարկվում աշխարհիկ հոսանքին: Ուստի, յեթե հին ժողովածուների, ինչպես և Մխիթար Գոշի առակների մեջ յերևում և ավելի կրոնական ուղղությունը, հետագա ժողովածուներն կամ հին առակներն նոր մշակություններն մեջ տեսնում ենք նաև նոր, վոչ յեկեղեցական մտածողության յեղանակներ և, վոր գլխավորն և, ժողովրդական իրական կյանքի պատկերը, մի բոլորովին նոր աշխարհայեցողությամբ, վոր դառնում ենք նաև Ֆրիկի բանաստեղծության մեջ և վոր մեր գրականության մեջ չի յերևում մինչև 12-րդ դարը: Յեկ այս վոչ միայն Վարդանա, այլ և արդեն Մխիթար Գոշի առակների մեջ:

5

Տեսենք, թե ինչպես և զծագրվում հասարակական կյանքի պատկերն առակների մեջ, ավելի Մխիթար Գոշի, նկատի ունենալով, հարկավ, վոչ այնքան առասպելական, վորքան խրատական մասերը, վորովհետև մինչ առաջինները կարող են ընդհանուր բնավորություն ունենալ և մեծ մասամբ այդպիսի յեն, առաջինները ծագում են հայ հեղինակներից, վորոնք և իրենց դասակարգի գաղափարախոսներն են: Յես այստեղ կառնեմ հատկապես, նախ՝ ազնվականության և աշխատավոր համիկ դասի հարաբերությունը և յերկրորդի պայքարն առաջինի դեմ. ապա՝ այն խուլ պայքարը, վոր յեղևում և մի կողմից՝ քաղաքի տարրեր արհեստավորներին, մյուս կողմից՝ քաղաքի և գյուղի միջև. յերրորդ՝ թե ինչ վիճակ ունի յեկեղեցականությունը և ինչ կարծիք ունեն նրա մասին աշխատավորները, կամ աշխատավորության կռիվը հոգևորականության դեմ. և վերջապես՝ հոգևորականության հայացքը հայերի և աշխարհիկների իրար հետ հարաբերության վերաբերմամբ:

Յերկրի գլուխը թագավորն և, վոր ունի իր յերկրորդը: Առակախոս Մխիթարը թագավորի յերկրորդն անհրաժեշտ և համարում: «Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց. զի ոմն զբարեկարգութիւն պահեցէ, և միւսն զմարտսն վանիցէ»: Մխ. ԿԸ, 64:

Մնացած իշխաններն ել թագավորն ըստ պատշաճի պաշտոններ և տալիս:

Հայեցեալ բեհմովն յերաքանչիւր ազգոյ կենդանեաց անկաւոր կարգէ իջեալն, զգուսարակ՝ անդէնց, և զխոյ՝ հօտից, զնոխազ՝ հօրանաց, և զառիւծ՝ դադանաց, զձի՝ բռնակերաց, և զարծիւ՝ թռչնոց վայրենեաց, և զաքաղաղ՝ ընտանեաց, և սահմանէ իւրաքանչիւր դործոյ ուշ ունեիլ:

Բարեկարգս կամի առնել առակս զթագաւորս, ըստ պատշաճի վիճակի զիշխանս և զդատաւորս՝ նմանապէս և յեկեղեցիս ուղղել զկարգս:

Մխ. 22. 70

Թագաւորն զործը զլիաւորապէս այն է, վոր նա կամ ասպատակում է ուրիշ յերկիրներ, կամ թե իր յերկրի մեջ տեղեւոյ շրջելով՝ ծանրանում է իւրայիններն վրա:

Յետ կարգելոյ զիշխանս ի ջուրսն, Լեւիթան արքայ, ասեն, զիւրդ է՝ զի ոչ շքեւս, կամ ասպատակեալ եւ նա ասէ. Զի թշնամիք առ մեզ ոչ գոն, և անկարօտ եմք իմիւր. զմերս վայելեցուք. և ընդ ձեզ ոչ գրօսանամք, զի մի ծանր ձեզ եղէց: Եւ ասացեալքն հաճոյ նոցա թուեցաւ:

Անարկութիւն առակն այսպէս է. զի թէ թագաւորութիւն յայլմէ ոչ նեղիցի ի թագաւորէ՝ և բաւական չեանա ունիցի, բարի է խաղաղասէր լինել, նա և ոչ իւրոցն ծանրանալ շրջելով. ապա թէ հարկաւորի ի թշնամեաց, անարկութիւն է ոչ առաւելապէս:

Մխ. 42. 63

Մխիթարն, ուրեմն, խրատում է, թե յերբ թագաւորը բաւական ապուրտութեամբ ունի, ավելի լավ է խաղաղասէր լինել, և վոչ իւրայիններն վրա ծանրանալ շրջելով:

Թագաւորը վոչ միայն շրջելով է կեղեքում, այլ և իր մոտ յերկրպագելու յեկած իշխաններից շատին կլանելով իրեն կերակուր է դարձնում: Նրանք ել թագաւորից Կրինակ առնելով՝ ավելի հանդուգն են դառնում, ավելի ևս հորդորվում են չարիք գործելու և իրենցից թուլներին և փոքրերին են ուտում: Յեւ յիսկ թագաւորը մեկ-մեկ մեղադրում ու հանդիմանում է այդպիսի իշխաններին, այդ արժեք չի ունենում:

Մեղադրեցան ձկուներ ի թագաւորէն իւրեանց, թէ՛ Ընդէ՛ր զայլս ուտէք զմանուսնս: Եւ նոքա համարձակեալ ասեն. Վասնզի ի բէն ուտաք. եկեալ բազմաց յերկրպագութիւն, և կլանելով կերակուր քեզ արարեր. ըստ այսմ և ինքեանք ևս յանդիմանագոյնք եղեն:

Չայնոսիկ յանդիմանէ առակս, զի որով ինքեանք գործեն, զայլս բաժնուել կամելով առաւել ևս ի չարիս յորդորեն՝ քան թէ կարճեն. վասն զի գործով՝ քան բանիւ ի դէպ է լինել խրատուն:

Մխ. Ա. 36, 69.

Ահա մի թագաւորութիւն, վոր հիմնված է նրա վրա, վոր զորեղը թուլլին ուտում է: Իսկական և վերջին ուտվող ժողովուրդն է կամ աշխատող դասը՝ լինի քաղաքացի թե շինական, իսկ աղնվականները՝ թագաւորը, իշխաններն և յեկեղեցականները՝ միայն վայելուղն են:

Այսպէս և Մխ. Է. 9.

... Զձեզ իշխանս կարգելով՝ այնպէս թագաւորեմ... Եւ յօրինեաց զկարգ թագաւորութեան յանձն առնով նոցա գործ՝ զինեպետ, և զթղնի՛ հիպատոս, զդմնի՛ դահնապետ, և զնոսնի՛ քշիլպատ, և զայլս ի պաղոց ի դարմանս, զմայրս՝ ի շնուածս, զանտառս՝ յայրուսնս, զմորենի՛ ի բանտ, և զայլսն ամենայն յերաքանչիւր գործոյ:

Այսօրները հասարակ ժողովուրդն է, վոր, հարկավ, գոն չե իր վիճակից. ուստի առակախոսը յեղրակացնում է.

Յանդիման կացուցանէ առակս, թէ ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփութից, և ոչ բարձրանալ առանց անարդից:

Շատ տխուր է այդ թագաւորութեան դրութիւնը:

Մխիթարն մի շարք առակներն մեջ այս սոցիալական անհավասար դրութիւնը, ինչպէս կտեսնենք, խիստ զգալի յի: Ժողովուրդն իշխանների սեփականութիւնն ու ստացվածքն է: Նրանք շատ ուրախանում են, յերբ իրենց հպատակները հաջողութիւնն են ունենում, բայց այդ վոչ թե իրենց բարեսրտութիւնից, այլ վորովհետեւ այդ հաջողութիւնն ել իրենցն են համարում, քանի վոր ուղած ժամանակ կարող են հպատակներից ամեն մեկին խիստ և ուտել:

Վարուժանի տեսեալ բազմորդի զլոր՝ գոհանայր զաստուծոյ, և ինքակից նմա լինէր: Եւ ասէ լոր. Եթէ՛ ճշմարտութեամբ գոհանաս, երանի է քեզ: Եւ անդէն ետար զմի ի ձագոսց նորա՝ Է ըմբռնեաց: Ասէ լորն. Ահա յայտ եղև, զի ոչ վասն աստուծոյ գոհանայիր, այլ վասն ազանութեան:

Յայտնէ առակս զբարս իշխանաց, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկելոց ընդ յաջողութեան, ինքեանց վարկանելով զնոցայն՝ քան թէ ստացողացն:

Մխ. 36. 99.

Իշխանները, վոր գողերին պատժում են, իրենք ավաղակութեամբ ու գողութեամբ են պարապում:

Գող զբորէ ըմբռնեաց առիւծ. և նա ասէ. Զմեռնալս ուտեմ, զի կենդանեաց ոչ յաղթեմ, իսկ դու զի յաղթող եմ՝ անդանդաղ զայդ գործես:

Զբռնակալ իշխանս առակս բամբասէ. զի զգողս պատժեն, և ինքեանք բռնակալութեամբ զնոյն գործեն, ըստ յանդիմանութեան առաքելոյ:

Մխ. 79. 82.

Ո՞վքեր են այդ պատժվող գողերը. — միայն հասարակ ժողովուրդը: Իշխաններն ինչքան ել գողութիւնն ու զրկանք անեն, չարիքներ գործեն, նրանց համար դատ ու դատաստան չկա: Դատվողն ու պատժվողը միայն ժողովուրդն է: Ահա ձեզ Վարդանա առակներից մեկը.

Թէ՛ ՈՎ է ԻՇԽԱՆ ԴԱՏԵԼ.

Էր մեծ վանք մի. և հայր վանացն բարեկենդանին .Գ. ազգ ժողով արար և յետ ի յետ տուն ծերոցն ի յետ և երիտասարդացն ի յետ և տղայոց ի յետ, և արար պատրաստութիւն և գնաց ի մէջ գիւղերին եկն տեսնել, թէ՛ զինչ պակասեալ է, որ բերէ: Եւ եկեալ յերդին ծերոցն և ետես. և գնաց ի բերել զպետուս նոցա: Եւ եկեալ յերդին երիտասարդացն և գնաց ի բերել զպիտուս նոցա: Եւ գնաց յերդին տղայոցն ետես, զի զբեալ էին. Ա. վարդապետ ի տղայոցն և Ա. կաթողիկոս. և Ա. եպիսկոպոս. և Ա. երէց. և Ա. սարկաւակ և այլն ժողովուրդէ: Եւ հայրն միտ գնէր: Եւ ըմբռնեցին զմէկ աշխարհակայն ի մեղս և բերին առ տարկաւակն. և սարկաւակն ասաց, թէ՛ Երէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն. առ նայ տարէք: Եւ տարին: Եւ երէցն ասաց, թէ՛ Եպիսկոպոսն աստ է. առ նայ տարէք. Եւ տարին: Եւ եպիսկոպոսն ասաց, թէ՛ Կաթողիկոսն աստ է, առ նայ տարէք. Եւ տարին: Եւ կաթողիկոսն ասաց. Վարդապետն աստ է: առ նայ տարէք: Եւ տարան: Եւ կանոնս և արժանացուց պաշխարութեամբ: Եւ յորժամ զիշխանաւորքն ըմբռնեցին ի մեղս, ժողովուրդքն ասաց, թէ՛ Ժողովրդեան չէ պարտ, որ զիշխանաւորն դատէ. զի ասեն զիրք աստուածայինք, թէ՛ Մարդ ամենայն, որ ընդ իշխանութեան՝ ի հնազանդութիւն կացցէ. մեզ ոչ է պարտ դատել, ինքն զիւրէ և Բրիստոս:

Յուզանք առակա, թէ ժողովրդեան չէ պարտ զիշխանաւորն դատէ. զի ամենայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է. և Քրիստոս հրամայէ, թէ՛ Դու ո՞վ ես, որ դատես զայլում ծառայ. և ամենայն զիրք աստուածայունչք զայս ասեն:

Առ. Վարդ. Բ. 164. ԾԼԷ

Դատելու ամենամեծ իրավունքը, ինչպէս կարելի չէ տեսնել, նույնիսկ կաթողիկոսից ավելի, պատկանում է վարդապետին, այսինքն միջնադարյան գիտնականին: Բայց սա իրավունք ունի դատելու միայն ժողովրդին, աշխարհականին, ռամկին: Իսկ յերբ իշխանավորն է հանցանք գործում, այդ ժամանակ իբր թե ինքը ժողովուրդն ասում է, թե ժողովուրդը չպետք է իշխանավորին դատի. «Ձի ամենայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է»: Բայց չի վոր հանցանքի մեջ բռնվել է այդ «ազնիւ»-ը: Այն, բայց այդ «ինքն գիտէ և Քրիստոս»: Ուրեմն իշխանավորը դատը միայն աստված պիտի աւելի և վոչ ժողովուրդը, վոր իշխանության տակ լինելով, ասում է առակախոսը, պարտավոր է հնազանդ մնալ իր իշխանին, նույնիսկ յեթե նա գող ավազակ լինի:

Ի՞նչ պիտի լինել դրա հետևանքով աշխատավորի դրությունը: Բերենք Վարդան Այգեկցու իրեն առակներէից մեկը.

ՄԵԾԱՏՈՒՆՔ ԵՒ ՄՇԱԿՔ, ԻՇԽԱՆՔ ԵՒ ՇՈՒՆՔ ԵՒ ԹՈՉՈՒՆՔ.

Եւ դարձեալ այս չէ դարձացում, ով ժողովուրդը աստուծոյ, թէ աստուած է ձեռն մեղաւորի զայլ մեղաւորս որդորէ՞ դառնալ առնա՞լ յուսով ապաշխարութեանն: Եւ զայս վասն այնորիկ առնէ աստուած, զի տեսցեն մարդիկ և զնա փառաւորեսցեն և ոչ զմարդն. որպէս և ցուցանեմ ձեզ յայտնապէս և պարզ աւերնակաւ:

...Եւ արդ՝ ահա տեսանեմ զմեծատունսն, որ է ձեռն մշակաց գործին և փոքր պատեն և պահեն զայգիս և զդարձաւ. եւ է ժամ ճաշակման ողկուղիցն և պտղոցն ոչ զմշակսն յիշեն և ոչ զփուշն, այլ տանուտեառն շնորհակալ լինին. և նմա կեանք և խաղաղական հայցեն յաստուծոյ: Նոյնպէս և փառապարզ մեծամեծ իշխանքն է ձեռն շանց և գիշակեր թռչնոցն որսան զերէսն և զթռչունսն: Իսկ ի ժամ ճաշակման պարարտ և անուշահամ մսոյն ոչ զշունսն յիշեն և ոչ զթռչունսն, այլ իշխանին լինին շնորհակալ, և յաստուծոյ խնդրին յերկար ժամանակաւ վարել նմա զիշխանութիւնս:

Առ. Վարդ. Գ. 77, Ե.

Այսպէս ուրեմն այն աստիճան ընկած և մոռացության է տրված աշխատավոր շինական դասը, որ իշխաններին համար գործող մշակները հավասարվում են այն շներին ու գիշատիչ թռչուններին, վորոնց միջոցով իշխանները վորս են անում: Վայելում են իշխաններն աշխատավորի ձեռքի արդյունքը, և աշխատավորը մնում է քաղցած: Վարդան Այգեկցին այդ պատմում է իբրև մի սովորական հանրաժանութ. յերևութ: Ուրիշ տեղ սակայն («Վասն զրկանաց») նա պաշտպանել է աշխատավորի իրավունքը դժոխքի սարսափներով զարհուրեցնելով մշակի վարձը կտրողներին: Սոցիալական խնդիրներ, սակայն, նա չի հարուցանում: Բայց արդյոք կյանքի մեջ չկային դրանք:

Տեսնենք Մխիթար Գոշի առաջին առակը:

Աստուած յառնելն երբեմն զարարածո՞ երկեաւ հակառակիլ. և խառնաց ցժանքն ընդ թեթեւն, զտկարն ընդ հոգորն. զի թէ հակառակ զարձցին՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին:

Խրատէ առակս զթագաւորս՝ կարգել զմեծամեծս՝ և զնուաստս ընդդէմ միմեանց. զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեսցին:

ՄԽ. Ա. 5.

Ըստ այս առակի, թագավորը կառավարութեան սխտեմն այն է, վոր նա «մեծամեծներին ու նվաստներին» իրար հետ կովեցնում է, վորպէսզի իր դեմ չելեն: Յեւ վարչութեան այս յեղանակը մի անհրաժեշտութեան է համարում թագավորական իշխանութեան գաղափարախոս և մեծ իշխաններ իր անձնական բարեկամ Մխիթարը, վոր խրատում է այդպէս վարվել: Նա մինչև անդամ աստծու անուշով սրբազործում է այդ, պատճառաբանելով, թե աստված ինքն ել այդպէս է վարվել արարչագործութեան ժամանակ:

Այսպէս ուրեմն, իրար դեմ հանել «մեծամեծներին և նվաստներին»:

Բայց ո՞վքեր են դրանք: «Մեծամեծքն» ազնվականներն են, ազատները, «իսկ «նուաստքը» — վոչ ազնվականները, անազատները, կամ «վար, ցած, խոնարհած, յետին, տառապեալ, չնչին, խեղճ» մարդիկը, ինչպէս բացատրված է այդ բառը Հայկազնյան լեզվի Առձեռն բառարանի մեջ: Թե այս բացատրութեանը ճիշտ է, յերևում է Մ. Խորենացու Հայոց Պատմութեան մի հատվածից (Ա. գլ. ԻԴ.). այստեղ պատմագիրը յերգիչներից առնելով գծագրում է թագաւորի գաղափարական տիպը, վորն համար է միջի այլոց ասում է. «Ոչ վորի գաղափարական տիպը, վորն համար է միջի այլոց ասում է. «Ոչ ընդ լաւագոյնսն խանդար և ոչ զնուաստսն արհամարհէր»: «Լաւագոյնքն» ազնվականներն են: Մ. Խորենացու ձեռագիրներին Ա. խմբի մեջ*) «զնուաստսն» բառի փոխանակ կա «զստրուկսն»: Կը նշանակէ՝ հին ժամանակ նուաստ և ստրուկ բառերը հասկացված են իբրև համանիշ: Այդպէս «նուաստ» կոչվել է ռամիկը, հասարակ աշխատավոր դասը, ինչպէս այժմ էլ կոչում ենք վերին կամ բարձր դասակարգ և ստորին կամ ցածր դասակարգ:

Մխիթար Գոշը, ուրեմն, խրատում է, վոր թագավորն ազնվականներին ու հասարակ, աշխատավոր ժողովրդին իրար դեմ հանի, վորպէսզի չկարողանան թագավորի իրեն դեմ յեկնել: Մի անգամ վոր Առակագիրն այդ է քարոզում, նշանակում է իրականութեան մեջ գոյութեան է ունեցել այդ կռիվը, դասակարգային պայքարը, և հենց այդ է պատճառը, վոր Մխիթարը հանդես գալով իբրև թագավորական իշխանութեան գաղափարախոս՝ ամենից առաջ, իր առաջին առակի մեջ հենց այն հոգացողութեան ունի, վոր հեղափոխական շարժումն ուղղված չլինի թագավորի դեմ:

Կտր արդյոք այդ շարժումը:

Դասակարգային պայքարը տեղի չէ ունենում այն ժամանակ, յերբ ճնշված, հարստահարված դասը գիտակցում է իր դրութեան վատթարութեան և իր շահերի հակադրութեանը ճնշողների ու հարստահարողների դեմաց: Յեւ Մխիթարի առակներին մեջ տեսնում ենք, վոր ռամիկը շատ

*) Մ. Խորենացու Հայոց Պատմութեան ձեռագիրները հնագույն ժամանակներից բաժանվում են իրիկու խմբի: Տես Մովսիս Խորենացու Պատմութեան Հայոց» աշխատութեամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս. 1913:

լավ գիտե իր տառապագիւնը՝ դրոշմովուհը: Նա գիտե, վոր տերերն իրեն տանջում են, կաշին քերթում են վոչ միայն կենդանի ժամանակ, այլ և մեռնելուց հետո: Ուստի և նա ստիպված է թագնվել տերերից:

Մեղադիր եղին ոմանք կղբող, եթէ զիմրդ ի ջուր յաճախ զեզերիս: Եւ ասաց. Զի ոչ շատանան զերկուորիս առ կենօք առնուլ, այլ և մահուամբ մերկ ի մորթոյ առնին:

Զչարաց տերանց առակս ազգէ. զի կենօք տանջի և մահուամբ:

Մխ. ՂԶ. 83.

Աշխատավորն իր տերերից վոչ մի լավ բան չի սպասում. մինչև անգամ Առակախոսը խրատում է, թե պետք է զգուշ լինել տերերից, զի նրանց բարքն այնպիսի յե, վոր նույնիսկ «քաղցր» տերերը միշտ ել բարի չեն:

Հաւ ընտանի յմբանել ստացողին իւրոյ, յոյժ աղաղակէր. և ոմանք մեղադիր լինէին, եթէ զմէ վայրապար կռիչս ամբառնաս: Որոց ասաց, թէ՛ Զարհուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբռնէ. զի երբեմն զլիկվայր կախէ, և բազում աւուր ճանապարհ տանի. և երբեմն ի վերայ կայծականց խորովէ և ուտէ:

Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է յամենայն ժամու բարի ի նոցանէ դտանել, թէպէտ և քաղցր իցին. այլ երբեմն և չարի ակն ունիլ արժան է, և զգաստ կեալ, և պատրաստութեամբ վարիլ ընդ նոսա:

Մխ. ՃԻԵ. 106.

Ոնղճ մարդիկը տառապում են իրենց չքավորութեան մեջ և մինչև մտածում են իրենց դառն դրութիւնը թեթեւացնել, իշխաններն ու բռնակալ թագավորներն ալիւլի ևս տանջում են նրանց կողմ ու բեկարով և կողոպտելով: Կարգանք «աղորժ աղխաթի» առակը:

Մյր մի աղքատ երթար ի քաղաք մի. ի ճանապարհին հիւանդացաւ և աղաչէր դաստուած պատրաստել նմայ գրաստ տանել ի շէնն. և անայ դայ ոմն չարաբարոյ՝ հարկանէր զնայ: Սրի յոտն, ասէ, և յալիէ զքուռակս. զի ոչ կարէ գալ զհետ մաւրն իւրոյ: Եւ յարեաւ և լար դառնայլստէ՝ զի ոչ կարէր կանխել. և այքն չարաբարոյ ոչ դադարէր ի հարկանելոյ զնայ: Եւ նայ ասէ. Վայ ինձ, աստուած իմ, փոխանակ թեթեւացանելոյ ծանդրացուցեր զվիշտս:

Յուցանէ առակս, թէ աղքատքն տառապելն վասն չքավորութեան և խնդրեն ինչք և ստացուածք ի յաստուծոյ. և թագաւորքն և բռնաւորքն, զինչ ունի, զան ալ կողոպտեն և թալնին:

Առ. Վարդ. Բ, 196, ՃԿԵ.

Մարդիկ արգեն սկսել են դիտել սոցիալական անհավասար դրութիւնը և մտածել դրա մասին: Զրկանք կրողները դասակարգային գիտակցութեան գալով, բնականաբար տրտնջում ու գանգատվում են իրենց վիճակից և աստծուց, վոր հավասար չի տեսել մարդկանց, ինչպէս վոր Ֆրիդրիխ Բրա-նաստեղծութիւններն մեջ գանգատվում է, թե ինչու պետք է՝

Մէկն ի պապոնց պարտնորդի,

Մէկն ի հարանց մուրդ լինի.

Մէկին հաղար ձի ու ջորի,

Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի, և այլն:

Առակներն մեջ ևս «հանդգնում են» խոսել իշխանների դեմ, քննում

են նրանց գործերը, դատում են և շատ չարիքներ զատաճառը նրանց համարում («Դատելիք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց դնեն նոցա»): Այս արգեն հեղափոխական մտքեր են, իսկ «հեղափոխական մտքերի գոյութիւնը վորոչ դարաշրջանում՝ յենթադրում է արդեն հեղափոխական դասակարգի գոյութիւնը»: Կարգանք այս առակը:

Տրտունջ եղեւ անկոց ամենեցուն զթագաւորէն իւրեանց, թէ առաջօք բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ. զի զոմանս ի տունս բնակեցոյց՝ վորպիս զնարինջ, և զոմանս ի բուրաստանս, և զոմանս յայգեստանս՝ և պատուին ի մարդկանէ, և զոմանս ի բրեւ զանարգս ի վայրի զպողաբերս, որ և կերակուր լինին խողից և կոխան դազանաց, և զայլս յանտառս՝ որպէս զժայրս, զսարգի և զնոճի և որ նման սոցին, զոր հարկանեն անխնայ, և անարգ քարշանօք ի շինուածս և յայրումն պատրաստեն: Եւ նորա լուեալ կոչեաց զնոսա, և աստեալ ի վերայ նոցա ասէ. Ո՛չ դիտէք, եթէ զխորհուրդ թագաւորին ոչ ամենեքեան դիտեն, որպէս և ոչ զաստուծոյն. և թէ այլ ևս յանդգնիք, մեծագոյն ունիք պատուհասիլ: Եւ զարհուրեալք լուցին:

Հանճարեղս զմեզ լինել կամի առակս, և հնազանդս աստուծոյ և թագաւորաց, և ոչ տրտնջիլ զանճառ խնամոցն աստուծոյ, և ոչ զծածուկ խորհրդոց թագաւորաց. այլ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել: Զի ոչ եթէ վայրապար ինչ եղև կարգիլ ի թագաւորէն անկոց զնոսա, որպէս և ոչ աստուած և ոչ թագաւորք տնօրինեն վայրապար. զի զոմանս յայգիս կարգեաց ի պողաբերաց, և զոմանս ի բուրաստանս, և զոմանս զհամացեղս յանտառս, այսպիսի պատճառաւ զի դազանաց և անասնոց կերակուր լինիցին, և մի նեղիսցեն զմարդիկ զտածեալս ի նոցանէ՝ ուտելովն. և թէ ի տունս ոմանք անկեցան, անուտելիք մանաւանդ են, ուստի համարին մարդիկ լինել ի զքօսանս տեսեան և ի բուրումն, զի կերակուր է ընդհաց բուրումն, և տեսեան ի զուարճացումն՝ որպէս բուրաստանք. նա և ի բժշկութիւնս եւս: Եւ այլ թէ անտառք ի շինուածս և յայրումն պատշաճեցան, և այս նախախնամաբար, զի մի լիցի՝ որ զպողաբերս հարկանիցեն ի շինուածս և յայրումն Այսպիսի և աստուծոյն տնօրինի և թագաւորաց զանխուլ և անքննելի դատաստանաւ, և թէ ոք յանդգնի անկարգաբար ասել, դատապարտի:

Մխ. Ի. 21.

Առակախոսը փորձում է «այրվողներին» տրտունջը լուցնել և քարոզում է հնազանդութիւն աստուծուն և թագաւորներին և նույն իսկ դատապարտում ու սպառնում է իշխաններին դեմ տրտնջողներին:

Կարգանք հետեյալ առակը.

Կարգեցաւ հրամանատար և ի թագաւորէն բուսոց ճակընդդ ի վերայ բանջարոց իբրեւ զտեւող յամարայնի ի կերակուր մարդկանս: Եւ խանդացեալ սիւս և ձմերուկ, և այլ պտուղք բանջարաց և պարտիզաց՝ թաղթ և չաղգամ և ստեպիլն, և սկսան չարախօսել՝ եթէ սաստիկ ամենեւին է, և զոչող որովայնիս Եւ գիտացեալ արքայի նոցա, տանջիլ զնոսա հրամայեաց, եթէ զի յանդգնիք ընդդէմ իշխանի, զի հնազանդել պարտիք, և ոչ քննիք լինել. զի մի անկարգութիւն լիցի:

Ցածուցանէ առակս զյանդգնութիւն մարդկան, որ դատիք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց դնեն նոցա. և ոչ իմանան՝ թէ այնքոք լուծանին կարգը իշխանութեան՝ մընչեւ ի բնաւիցն ժամանէ իշխան աստուած:

Մխ. Ծ. 51.

Տրտնջացողներին ուրեմն տանջում են, վորովհետեւ վոչ վոր չպիտի հանդգնի իշխանի դեմ: «Զի հնազանդել պարտիք և ոչ քննիք լինել, զի մի անկարգութիւն լիցի»: Այդ քննութիւնը, ինչպէս յերևում է Առակախոսի վերջին նախադասութիւններից, «հասած է յիզիլ մինչև ամենքի իշխան աստուծուն»

Բողոքողները յերբեմն թագաւորի սաստեղուց զարհուրած՝ լուծում են:

Այդ չար իշխանն ահա, ինչպես վերևում բերված Ձեռնակի մեջ, մի որ թուլանում, ընկնում է, և հպատակներն ընդվզելով նրա դեմ, հնարավոր են գտնում հարկ չտալ. ուստի և դադարեցնում են հարկատվությունը: Վորի կողմը պիտի լինի այժմ Առաքելոս Մխիթարի համակրությունը: Նա գոհ է, վոր ընկնում են այդպիսի չար ու տանջող իշխանները, լինին «յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց»: Բայց և այնպես նա ավելի էս գոհ է, վոր չար իշխանները ժողովրդի ձեռքով չեն, վոր պատժվում են. «Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէնջ եղև» (Մխ. Ձե 76:): Ուրեմն դարձյալ նա չի մոռանում իր դատակարգը և չի ուզում, վոր աշխատավորի ձեռքով պատժվի չար իշխանը: Նույնը նաև Վարդանա առակների մեջ (Գ. ԽԸ, յեր. 107): Յեւ վոչ միայն այդ: Ազնվականություն զաղափարախոսը, հակառակ ժողովրդական առածի, թե՛ «գեղ կանգնի, գերան կը կոտրի», խրատում է, թե տկարները, ինչքան եւ թվով շատ լինեն և միաբան, չեն կարող հզորին հաղթել, և թե խելոքություն կը լինի, վոր այդ ապստամբ տկարներն իրենց ուժը համեմատաբար պակաս ուժեղի, այդինքն՝ յերկրորդական իշխանների դեմ փորձեն:

Ժողովակ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերացոյնքն. Մեք բազումք եմք, զինքդ դաւեւ և զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի: Ասէ ոմն. Ձի ոչ միաբանութեամբ վարեմք: Եւ խոսարհալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն, և ի ծագել լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս ի սմանէ աղօտացաք, զինչ և յարեգական ծագելն լիցուք: Եւ զըզջացեալ զպարտութիւն խոստովանեցան:

Նրառէ առակս, թեպետ և բազումք իցեն՝ և տկարք, հզորի յաղթել ոչ կարեն. իմաստութիւն է՝ այլ եւս տկարիւ զփորձ առնուլ՝ և զղջնալ. որ և թողութեան է արժանաւոր Մխ. Ե. 7.

Մխիթարն ինչքան եւ մի կողմից տկարներին խրատում և չապրատամբել հզորներին դեմ, մյուս կողմից սակայն հզորներին եւ զգուշացնում և տկարներին:

Ձրոյն մըջեան արջ փորէր և լեղուաւ ժողովի և ուտէր. և հնարի մըջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և դուռի և մծիկ և շանաճանճ և բրէտ և առ նմանք ոռցին. և աղաչէ օգնել իրը աղգային Յովակցեն՝ հարկանն գաջ և զրեղիս արջուն, և հարկան՝ գլուխ դժարի, և նեխի և որդոնք եւս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց զբերան բացեալ զոչէր եւ նոցա մտեալ յորովայն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Ձօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արնամարնեն, և ոչ երկնչին սակայն իմաստութեամբ զօրանան փորձուք. և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստութիւն է ի փորձուց իբրեւ ի մեծամեծաց երկնչել:

Մխ. ձԾԴ. 124

Բոլոր իշխաններն եւ չար չեն ըստ Մխիթարի. կան և այնպիսիները, վորոնք իրենց բերգերի մոտ տեղ են տալիս ժողովրդին ապրելու և իբրեւ կալոյ պաշտպանում են նրան ավագանիներից ու ասպատակավորներից: Յեւ այս անում են նրանք իբր մի բարեգործություն, իբր մի բարեպաշտական գործ, վշտակցելով տկարներին և փոխաբենն իբր թե միայն աղովք ու մաղթանք ստանալով իրենց վողջութեան և հոգու փրկութեան համար:

Նրա՞մ ճշնճղկու երթեալ առ արաղիլ, և աղաչեալ զնա ասեն. Ի բոյն քոյ տեղի մեզ տացես հանել ձադս, և յօձից զձադ. մեր պահեսցես: Եւ նա ասէ. Ձինչ ինձ առնիցէք, զի դայդ ձեզ առնիցեմ եւ ասեն. Աղօթս առնեմք, զի ձադք ձեր առողջութեամբ սնանիցին ի վնասակարութենէ օղոյ, և ի հանդերձեալսն կենաց արժանի լինիք յաղազս արդարութեան ձեր: Եւ յաղազս այսորիկ տեղի ետ նոցա: Եւ եղև ի հանել նոցա ձադ, սողաց օձ առնու ի նոցանէ, և տեսեալ տառեղան՝ եհար սատակեաց զօձն. և ջրջեր եւս շուրջ ի սահմանս միանգամայն սատակել զօձսն յաղազս փրկութեան նոցա:

Ձվշտակցութիւն առակս ուսուցանէ տկարաց՝ յերկաջանչիւրսն վայելել փրկութիւն՝ սակա բարեգործութեան նոցա:

Մխ. ձԴԲ. 103.

Վարդանա առակներն մեջ, սակայն, այդ պաշտպանությունը չկա: Մխիթարի այդ առակն այնտեղ փոխվել է այնպես, վոր իշխանն այլևս չի պաշտպանում իր հովանուն ապաստանող ժողովրդին, այլ միայն իր զվարճությունն և անում. նա ժողովրդին խաբում է, ըստ առակի առասպելին, իբրեւ թե ոգնել չի կարողանում նրան, թեպետ կամենում է:

Մամր թոչունք յեւ արագիլ:

Ժողովեցան մանր թոչունքն և աղաչեցին զարաքին, զի դեցեն զբոյսս իւրեանց ի ներքոյ բնին արաքի: Եւ եկեալ աւժքն բնակեցան ի խիւսն, զոր կուտեալ էր արաքին ի բունն իւր: Եւ սկսան քարոզել զնորածին ձագսն մանր թոչնոցն: Եւ արաքին ունի սովորութիւն, որ տանի զգլուխն յետ ի վերայ թիկանցն և զկտուցն կլկեցնէ իբրեւ զձնճղայս. և կարծէին մանրաձագերն, թէ ապաշօէ (ապաշաւէլ խղճար, ափոտող, ցավիլ) զմեզ. և ասէին առ նա, թէ՛ Շատ ճորհակալ եմք քեզ. զի թէպէտ և աւգնել ոչ կարես, որտմակից լինիս մեզ:

Նշանակէ առակս, թէ թագաւոր ոմն կամ իշխան ոչ կարէ աւգնել ժողովրդեանն և պահել ի թշնամեաց. այլ զհարկն յաւելորդ պահանջին աղքատացն և ինքեանք փափկանան. նոյնպէս և հոգեւոր առաջնորդքն. զի խնամ ոչ տանեն հօտին և ոչ հոգան զբորոտն զհիւանդացեալսն մեղօք, այլ զգէրն զնենն և ճարպովն պարարտանա:

Առ. Վարդ. Բ. 198. ձԿԵ.

Ըստ առակի խրատական մասի, ժողովուրդն արդեն գիտե, վոր աղնը վականությունն այլևս անպետք է և ավելորդ է և զուր ծանրաբեռնություն: Նա միայն փափկանում և իր անձն է պարարում: Այսպէս և հոգեւորականությունը:

Բայց այդ չէ միայն:

Վարդանա առակների մեջ, վորոնք ժամանակով ավելի ուշ են, աշխատավոր շինականի այս դատակարգային պայքարն ընդդեմ ազնվականի՝ մի փոքր ավելի յե շարունակվում: Աշխատավորն այնտեղ արդեն կատարելապէս գիտակցում է իր արժեքը, իր շահերի հակադրությունն իշխանների դիմաց: Նա ըստ արժանույնն զնահատում է այն թագավորներին, իշխաններին ու պարոններին, վորոնք վտակով ու արծաթով զարդարուն ձիերի վրա բազմած ման են գալիս և ապրում են աշխատանքով մշակի, վոր չարչարվում և հոգնում և աշխարհը շեն պահելու համար: Ուտում են իշխանները և յերախտամոռ լինում. հեծնում են ձի և միայն աշխարհ ավերում:

«Նզկն յեմ ձի»

Նզն և ձին խաւացան ընդ միմեանս: Ասաց ձին ընդ եզն, թէ՛ Դու մի ես կամ զինչ պէտք ես: Ասէ. ես ձի եմ, որ թագաւորք և իշխանք և պարսնայք կազմեն զիս ոսկով և ար-

ծաթով և բազմին ի վերայ իմ: Ասէ եղն. Ամէն աշխարհիս զէն եմ ես, որ վաստակիմ և չարչարիմ և խոնջիմ. և ապա դու և քու թագաւորն ուտէք. և ամենայն մարդ զվաստակս իմ ուտեն. եւ թէ ոչ վաստակիմ, դու և քու թագաւորն մեկ հետ մեռանիք. և դու երախտայմոռաց մի լինար:

Յուդանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեղն, և մարդ կայ, որ հանապազ դէի հեծնի ու աւեր ածէ աշխարհի. և թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս զեղն. նայ մեռանի ձին և հեծնող նորա:

Առ. Վարդ. Բ. 151, ձի:

Ազնւականն, ուրեմն, այլևս վոչ միայն անպետք ե, այլ և պարապորդ, ավերածու:

Այս գիտակցութիւնն այնուհետեւ մինչև այժմ ել մնում ե մեր աշխատավոր ժողովրդի մէջ: Ինչքան ել իրականութեան համապատասխան ե յեղել առածը, թե «եղը դատի, ձին ուտի», բայց և այնպէս ժողովրդական առակը, վոր յես գրի յեմ առել 1885 թ. Աստապատ գյուղում*), ասում ե.

«Վոսկե թամբով ձին բեռնած յեղան ասով.

— Յես ձի յամ ձիավորին,

Վոսկե աթոռ ամ թագաւորին:

Յեզն ասով.

— Յես յեզն ամ յեղնավորին,

Վոսկե աթոռ ամ ուղղարին.

Յես չգատեմ արտն ու գորին,

Ղառղառնին (ազոտիները) պոչիդ տակին կշարվին»:

Այսպէս ուրեմն, վերջ ի վերջո աշխատավորը, յերկրագործ շինականն ավելի բարձր ե դասվում, քան նրան կեղեքող ազնւականութիւնը: Յեւ այլապէս ել չեր կարող լինել, քանի վոր առակներն տեսակը, ինչքան ել հոգեւորականի ձեռով գրված, իր արմատներն ունեն աշխատավոր դասի մեջ և առակներն իսկապէս նրա գրականութիւնն են: Հենց այդ պատճառով ել դրանց մեջ տեսնում ենք այն կռիվը, վոր կեղեքված աշխատավորները վարում են ազնւականութեան դեմ:

*) Տպված ե Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի մեջ. յոթներորդ գիրք, Թիֆլիս, 1891, յեր. 85.

Ավերորդ չի լինիլ այստեղ գրել և հետեւել մասին: Հին Նախիջևանի մոտ գտնված այս Աստապատ գյուղում, վոր այժմ ավելի թագաւոր ե անվանում, նույն 1885 թ. տեղի յե ունենում ազգաբային շարժում: Դյուղի հողերն սեփականատերերն իրենք գյուղացիներն են յեղել պարսից ժամանակ. բայց ուստաց արեապետութեան որով կառավարութիւնն այդ գյուղը կալված ե տալիս Նախիջևանի խաներին, վորոնք 30-ից 7-ը բաժնաւ ելին առնում ամեն բանից: Դյուղացիք պարտավոր ելին խաների բաժինն ել կալսել և այլն և իրենց հաշիվով փոխադրել Նախիջևան նրանց ամբարները: Դյուղում կար չափազանց մեծ սակավահողութիւն (1914 թ. գյուղի բնակիչների թիվը 5000-ից ավելի յեր): Կալվածատերերը վոչ մի բանով չեյին մասնակցում գյուղի հանրային կարիքներին: Յեւ ահա այդ կեղեքված գյուղացիները մի հողաչափի ագիտացիայով, ապստամբում են: Նրանք հալածվելով յեկեղեցիները՝ յերգվում են վոչ մի բանից չափ խաներին: Հետեւեցին սովորականն ե լինում. կառավարութիւնն իսկույն հիսուն կողակ «եղեցիկութեամբ» յե գնում գյուղի վրա և 300-ից ավելի տղամարդ հալածում լցնում Նախիջևանի բանտը: Կողակները վեց ամիս մնում են գյուղում՝ ապրելով գյուղացիների հաշիվն և ամեն տեսակ անկարգութիւններ անելով: Բանտարկւածներն յերեք

Առակները լինելով ամենից առաջ քաղաքացիական գրականութիւն, բնականաբար, նույնիսկ Մխիթարի խմբագրութեամբ, իրենց նշանակումն են նաեւ քաղաքացիներին կյանքից: Այսպէս, որինակ, Մխիթար Գոշի առակներն մեջ հանդես են գալիս առանձնապէս արհեստավոր քաղաքացիները — հյուս, դարբին, կտավագործ, կարող (գերձակ), պղնձագործ, յերկաթագործ, արծաթագործ, վոսկեգործ, խաղախորդ (կաշեգործ), մորթեգործ, բրուտ, կոշկակար, շինողութիւն: Բացի դրանցից, կան նաեւ տնկագործ, վաճառական և այլն: Այս արհեստավոր մարդկանց մեջ տեսնում ենք մի խուլ մրցութիւն: Հաճախ վեճ ե ծագում, թե վորն արհեստն ե ավելի բարձր:

Այսպէս, որինակ, Մխ. ձի, 133, դարբինն առավելութիւնն ե տրվում հյուսնից. ձի, 134, յերկաթագործը գերադաս ե պղնձագործից:

Արքային Սողոմոնի հանդերձ ոմն կարէր արուեստի սքանչելի և յոյժ ուրախացել պանծայր. և բեհեզագործն ընդդէմ դիւրն յարդէ արուեստ: Եւ լուեալ արքայի կոչեաց դնոսս և ընտրեաց ի մէջ նոցա, թէ անկազմ է կտաւ առանց կարողի. սակայն զո՞ կարէ արուեստիւն, եթէ չիցէ արարեալ կտաւ. զի և Ադամ դտերեւ եղիտ և արար հանդերձ: Եւ այսու առաջին ցուցաւ կտաւագործ քան զկարող:

Ամենայն ուրեք առակս անպարսաւ ցուցանէ զկտաւագործ, զոր բազումը այսպանեն:

Մխ. ձի, 133.

Այս առակով կտաւագործն ավելի բարձր ե, քան կարողը, այսինքն՝ գերձակը: Շատերն այսպանում են կտաւագործին, բայց թե նա վորքան գիտակցում ե իր արհեստի արժեքը, այդ տեսնում ենք ներքևում գրված առակից՝ Տամբատեցի կտաւագործի մասին:

Ծաղրն ու այսպանումը տեսնում ենք և ուրիշների վերաբերմամբ. խաղախորդը մորթեգործին ե այսպանում, և սա նրան (Մխ. ձի, 135). ուրիշները կոշկակարին (Մխ. ձի, 136): Այս ցույց ե տալիս տարբեր համբարութիւնների վերաբերմունքը միմյանց:

Տեսնենք մի ուրիշ կողմ — տարբեր վիճակների կամ դասերի հարաբերութիւնը: Այսպէս Մխ. ձի, 132 առակի մեջ դարբնութիւնը, քաղաքացու արհեստը, նախամեծար ե դասվում, քան յերկրագործութիւնը, շինականի պարապմունքը: Դա քաղքենիներին կարծիքն ե: Այդպէս չի մտածում, սակայն, ինքն Առակախոս Մխիթարը. ամեն արհեստ ու պարապմունք, ժամանակին նայելով, կարող ե ավելի մեծարելի լինել:

Ի թագաւորին ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց, և թագաւոր դանձն կոչէր, զի պատկեր եղեւ թագաւորի. և նովաւ ամբարտաւանէր գործովն եւս ի վերայ արծաթագործաց և ալոց. եւ ի գալն ամենեցուն՝ ոչ եկն ցորեան ասելով. Դամ, մինչև նախ ինձ եկեալ երկիր պազանիցէ:

Դամից հետո արձակում են. բայց մի քանիսը բանտում մեռնում են, ուրիշներն այնտեղ հիվանդացած լինելով, դուրս գալուց հետո ջուտով մահանում են: Յեւ այդպէս վերջանում ե այդ ազգաբային շարժումը:

Փոփոխելի առակս ցուցանէ զնիւթականքս, զի ոչ միշտ պատուին. զի յերբեմն մեծաւորի ոմն, և երբեմն անպատուի. վասն ըստով անշատ վտանգի սովոյն նիւթք ամենայն խոնարհին ընդ ձեռամբ ցորենոյ: Նմանապէս և յայլսն է տեսներ. ըստ այսմ և յարուեստաւորս պատահի, որովք չէ պարտ ամբարհատաճել:

Մի. ձեռ. 134:

Վերջ ի վերջո ցորենը, ուրեմն դարձյալ յերկրագործ շինականն եւ, վոր չի յերկրագործում «Թաղավորի պատկեր» վոսկուն և հպարտությամբ պահանջում եւ, վոր իրեն գան յերկրագործն: Դա շինականի կարծիքն եւ: Քաղաքացիներն կարծիքը սակայն այդպէս չեն: Քաղաքի և գյուղի միջև տեսնում ենք մի խուլ պայքար, վորովհետեւ քաղաքի տնտեսությունն ուրիշ բնություն ունի, քան գյուղինը. քաղաքինը նոր եր, արագ բարձրացող. գյուղինը՝ հին, ընկած: «Ասպետն» արեղայի և գյուղացու հետ միասին, — գրում եւ Կ. Կառլցիկն, — հանդիսանում եր արտադրության հին ավատական յեղանակի ներկայացուցիչը: Այս յերեք վիճակներից (գասերից) յուրաքանչյուրը ծառայում եր իրեն արհամարհանքի և ատելության առարկա մեծ քաղաքների բնակիչներին համար... Քանի դեռ հեղափոխական եր մտում քաղաքացի բնակչությունը, ... նա թշնամիների դեմ կռւում եր կատակներով ու ծաղրներով: Հիմար գեղջուկը, դատարկապորտ տերտերը, իր աղքատության մեջ հպարտ ասպետը սիրված գործող անձերն են վերածնության և հաջորդ դարաշրջանների գրականության»*):

Այս միևնույնը գտնում ենք նաև հայոց գրականության մեջ 150—200 տարով ավելի վաղ, քան յեվրոպական գրականության մեջ**): Միեթարի մի քանի առակների մեջ ծաղրվում են վոչ միայն հոգևոր կանաները, այլ և շինականները — մշակը, յերկրագործը, հողագործը: Մի. ԾԳ. 54. «Զխտոր Գալիանոս՝ Թիւրակէ կոչէր շինականաց, եւ լուեալ մշակի միոյ, առեալ եկեր կայթիւ (=կողովով), և խելագարեալ կուրացաւ»: Կամ հետեւյալը. Մի. ԾԳ. 54. «Եփեալ հողագործ ոք ի պարտիզէ իւրմէ զսոխ բազում, կարծելով զնա բանջար, և անկաւ յորովայնաճութեան ախոս»:

Կան առակներ, վորոնց մեջ ևս ծաղրվում են իսկապէս հիմար գեղջուկները, բայց Միեթարն, ինչպէս յերևում եւ, զգուշությամբ, ընդհանուր ձևով «ոմն», «ոք» բառերով և պատմել: Այդպիսիներից են որինակ՝ Մի. ԾԸ 56, ԿԱ 59 և ներքևում գրվածը: Վարդանա առակների մեջ կա դրա մի փոփոխակը, վորի մեջ մի մարդ քաղաք ե գնում մի եղ գնելու: Ուրեմն գյուղացի, վոր քաղաք ե գնում: Դրա մի փոփոխակն ել յես գրի յեմ առել 1885 թ. Աստապատ գյուղում: Այստեղ ծաղրվում են Դարաշամբի գյուղացիները, վորոնց վրա յեն պատմում ամեն տեսակի զվարճալիքներ***): Առնենք այդ

*) К. Каутский. „Томас Мор и его утопия“. М. 1924, стр. 41 հտ.

**) Տես Մ. Արեղյան. «Համատնություն հին գրականության պատմության». Յերևան 1923 թ. յեր. 42—61:

***) Տ. Նավասարդյանց. Հայ ժողովրդ. հեքիաթներ, վեցերորդ գիրք, Թիֆլիս, 1890, յեր. 54—61:

յերեքն ել տեսներու համար, թե ինչպէս նույնը պատմվում ե տարբեր ձևերով:

Նտես ի վաճառի անփորձ ոք զգամամն, և հարցեալ որ մօտն կային, թէ՛ Զինչ իցէց եւ գիտացեալ եթէ տղետ ոք է, ասին, թէ՛ Զու է սիրամարգի: Եւ նա հաւատարիմ կարծեալ վասն նմանութեանն. և տարեալ եղ ի ներքոյ հաւու, զի ելցէ ձագ սիրամարգի. զոր առեալ եկեր հաւու եւ յետ աւուրց երթեալ ի տես, և պատահեալ անդ ոսկի եղնակ՝ Թռեաւ. և նորա նստեալ լայր, եթէ՛ Անժամ եկի, և անկատար դնաց ձագ սիրամարգին:

Զառակս այսպէս գիտեմք, զի յիմարաց գեղեցկութիւնն պատրով է՝ և հաւատարիմ դուրսութիւն կարծէ, այլ իմաստունք գիտեն, զի գեղեցկութիւնն անդոյ է, և զօրութիւնն ճշմարիտ Մի. Կ. 58

ՅԻՄԱՐ ՅԵՎ ԶՄԵՐՈՒԿ

Այլ մի անմիտ և յիմար ունէր դահեկան մի և առեալ զայն դնաց ի քաղաքն գնել էջ մի. չըջեցաւ ի քաղաքն և ի շուկայն և ոչ գտաւ միոյ դահեկանի էջ: Եւ եկն կրկն ի շուկայն, ետես մեծ ձմերուկ մի և ասէ հիացմամբ. Զինչ է այս: Եւ յիմացան վաճառականք, թէ յիմար է և ասին թէ՛ Հնդկ իշու ձու է և հանէ հնդացի իշու էջ մեծագոյն. Եւ նայ խնդալով ետ զդահեկան և էսա դնա: Եւ պնդեցին դնա, թէ պատրաստ տար զձուս, որ չէ բեկի և էջն ելեալ փախչի: Եւ առեալ զձմերուկն սկսաւ դնալ դառ ի վար ճանապարհ. և ոտն նորա դայթակղեցաւ. և զերծաւ ի նման ձմերուկն. և դուրեալ դնաց ի մէնջ թաւ անտառին. և նապաստակ մի վաղեաց ի յանտառէն և սկսաւ փախչիլ: Իսկ նայ կարծեաց, թէ բեկաւ ձուս և էջն ելեալ փախչիլ: Եւ ի հետ մտեալ ձայնէր նապաստակին. Ա՛յ էջ հնդացի, վայ ինձ, մի փախչիլ: Եւ ձայնէր. Գուգի, քուգի, ողորմեալ ինձ և դարձիւր առ տէրս քո:

Ցուցանէ առակս, թէ այսպէս յիմարեցան թաղաւորքն, քահանայքն և ժողովուրդքն, և թափեցաք ամենքեան ի խելաց և ի մտաց և զհետ մտաք զսուտ և խաբող կենաց աշխարհիս այսորիկ, որ նման հողմոյ և փաղչի ի մէնջ և նման երազոյ պակասէ. և ջանամք ըմբռնել զհեղուկութիւն և զմեղս աշխարհիս և զարջելի սիրով և ցանկութեամբ միայնութիւն ի մեղս աշխարհիս և լինիմք ողորմելիք հողմի և մարմնով:

Առ. Վարդ. Բ. 105. 2թ.

Ահա դրա փոփոխակն ել իմ գրի առած:

Միւն շամբըցի կ'ընի, վեր կը կենա, կը գնա Նախչվան. կը տեսաւ ձմերուկ ան ծախում, կ'առի.

— Եղ ինչ աք ծախում: Կասն.

— Եղի ձմերուկի յո, վոր եղի տակին Թուխս դնես, քուռակ կը հանի:

Շամբըցու բայինը կը մընի, երկուսը կ'առնի, վեր կ'ունի, վոր գնա իրանց տունը: Ճամփին ձմերուկն վեր կ'ընկնեն, կը կոտրվեն: Դրըխլալուց մին քուլի տակին լպտորակը կը փախնի, եղ ել կ'ընկնի յեննէն, կը կանչի հա.

— Զո՛ղ, յես քո տերանին ամ. չո՛ղ, յես քո տերանին ամ:

Դե լպտորակը հո եղ չի, վոր անկաջ դնի, կաղնի—կը փախնի, կը հեղանա: Եղ շամբըցին եր, մըռերը կաթ, կըգնա կըհանն իրանց տունը, կնկանը կ'առի.

— Ա՛ կնիկ, գնացիմ Նախչվան, երկու եղի ձմերուկի առամ, վոր բերեմ գնեմ մեր էջի տակին, քուռակ հաներ, ճամփին վեր ընկան, կոտրվան. ես ջան վորդիքը ինձ խաբել ան միւն լալ եր, ես միւն ել քուռակը դուս եկալ, ինձանն խրտնալ փախալ...

Մեր ժամանակի այս զվարճալիքին կցված և իրեն շարունակություն մի յերկրորդը, վոր սյատեղ չի բերվում:

Գյուղացու ծաղր և և հետեւյալը:

Այլ ոմն կտաւագործ բնակեալ էր ի Տամբատ, և իւր սովորութեան բարք էր՝ առ ի զօրացուցանել զորդին՝ ասէր. Թագաւոր եմք արուեստի: Եւ ի հարցման որդւոյն՝ թէ հր-

ՀՄԽՀ Կուլտ. պատմ. ինստիտ. աղխ.—3

պէս, ասաց. Սանդր ջուրն իբր զթաղ դնեմ ի դուռն, և զստէծ իբր զսուր վերացուցանեմ, և ի դործ կտաւին իբր յաթոռ նստիմ, ընդ ոտիւք ունելով պատուանդան, և զկտաւ ժողովեմ իբր աշխարհ հնազանդեցուցանելով. և ձայն սանդերն իբր զձայն փողոյ: Եւ այլ ինչ ասացեալ այսպիսի: Յայտմանէ ստիպէ զհայրն զդուստր թաղաւորին Պարսից խնդրել իւր. և երթեալ խնդրէր. և նորա զայրացեալ հրամայեաց սպանանել: Եւ գիտացեալ, թէ ի Տամբատայ է այրն, հրամայեաց ներել:

Յուցանէ առակս, թէ ներման արժանի է առ աստուած և առ մարդիկ անգիտութեամբ մեղանշելն:

Մխ. ՃԿԴ. 131.

Մխիթարն այս առակի մեջ միայն հայտնում է, թե Տամբատում եր ապրում էր արհեստով այնքան հպարտ կտավագործը: Բայց դրա մի պատմը՝ վածքը կա Վարդանա առակներին մեջ: Այստեղ այդ կտավագործը Տանպատեցի յե, իսկ Տանպատը գյուղ է և այդտեղի մարդիկը ամենքը հիմար ու խել են: Հայտնի յե, վոր կտավագործությամբ պարապել են նաև գյուղացիք և միջին մի հիսուն-վաթսուն տարի առաջ՝ մեր դաշտային գյուղերից շատերում ձմեռները գյուղացիք կտավ եյին գործում:

Բերենք այդ առակն ևս ըստ Վարդանա առակներին.

ՏԱՆՊԱՏԵՑԻ ԶՈՒԼՆԱԿ

Զուրիակ մի ասաց, թէ աստուած զմարդն թաղաւոր է ստեղծել. և նա այլ թաղաւոր եմ յիմ յանձինս. և տուր ինձ թաղ և իմ մաստրայքս և առէչս ինձ հեծելք և ժողովուրդ, և երթամ խնդրեմ հնդկաց թաղաւորին դուստրն ինձ կնութիւն: Եւ դնաց առ հնդկաց թաղաւորն և ասէ. Տուր ինձ զքո դուստրն ի կնութիւն: Եւ ասէ թաղաւորն. Ի՞նչ մարդ ես և ինչ գործ ունիս, որ զիմ դուստրն խնդրես: Եւ ասէ. Զուրիակ եմ: Բարկացաւ և ասէ թաղաւորն ընդ զինուորացն. Տարէք և սպանէք զդաւ: Եւ ասէ թաղաւորն. Հարցէք զայրդ, թէ ուստի իցէ: Եւ հարցին զնա. նա պատասխանի ետ և ասէ. Յարեւելից կողմ գեղ մի կայ. անունն Տանպատ այ: Ասէ թաղաւորն. Թողէք զդաւ, մի սպանանէք. քանզի յիմար է. զի աշխարհն այն՝ ամենայն խել է: Եւ արձակելին զնա խաղաղութեամբ:

Յուցանէ, թէ մարդ որ անգիտութեամբ մեղք գործէ, նա խել լինի և խելութեամբ գործէ. նա աստուած չի համարիլ զայն՝ ծանր մեղքն, այլ սակաւ համարի. որպէս ասաց Քրիստոս, թէ՛ Որ ոչ գիտէ և առնէ, արբցէ զան սակաւ:

Առ. Վարդ. Բ. 293. Մշ.

Անցնենք այժմ յեկեղեցական դասին.

7.

Առակներին մեջ ինչպէս ազնվականության, նույնպէս և յեկեղեցական դասի նկատմամբ փոխված է արդեն հայացքը: Զնայելով, վոր Մխիթարին առակները գրել է մի հոգևորական, — առակներից մեկին մեջ (ՃԺԵ, յեր. 98) հեղինակն իր մասին հայտնում է, վոր հոգևորական է, քանի վոր նա քահանաների մասին խոստում է առաջին դեմքով, — բայց և այնպէս նրանց մեջ պարզ յերևում է աշխարհականի, այն ել վոչ ազնվականի վերաբերմունքը դեպի հոգևորականը, վոր և ապացույց է մի շարք առակների աշխարհական ծագման: Ինքն Առակախոսն իբրև հոգևորական դեռ շատ մեծ կարծիք ունի յեկեղեցականների մասին. նրանք, ինչպէս յերկինքը յերկրից, շատ բարձր են աշխարհականներից և լուսավորության աղբյուրն են:

Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկին. և ոչ կտրաց լուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկին՝ և լուսաւորել:

Յանդիմանէ նշանակաւ զաշխարհական ոմանս, որ փրացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքահանայից կամին հափշտակել զպատիւ. սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորի՝ քան լուսաւորէ:

Մխ. Զ. 8.

Քահանայական տոհմը, թեպետ աղքատ, բայց հոգևորով հարուստ լինելով՝ արժանի յե Առակախոսի կարծիքով նույն իսկ թագավորական տոհմի հետ հավասարվելու:

Խնամութիւն առնել ընդ միմեանս կամեցան թթենի և ձիթենի. եւ պանծայր ի դուռութիւն իւր իւրաքանչիւր ոք, ձիթենի յարազուարճութիւն և ի պտղաւէտութիւն, մանաւանդ զի պտուղ նորա նիւթ է ձիթոյ. և ձիթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի: Իսկ թթենի ի քաղցրութիւն պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ է մետաքսոյ, զոր որդունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թագաւորք և իշխանք վայելին: Որում և դիմադրէ ձիթենի զիւրեանցութիւն պտղոյ նորա, և զախտաւորն լինել հանդերձ, քան թէ հարկաւոր, և զի ի զիշերի մերկանայ, բայց լոյս ի գիշերի վառի: Ասէ թթենի. Այլ ի տունջեան շիջանի եւ ասէ ձիթենի, թէ՛ Ոչ շիջանի, այլ յազգակեցն իւր խառնի. իսկ փառք քո ծաղկընկէց է և անցաւոր: Եւ այսու պարտեալ թթենի՝ և հայցէ լինել իրին:

Նշանակ առակիս այսպիսի է. զի թագաւորական ազգ թէպէտ փառաւոր է, այլ երկրաւորօք ճոխանայ, որք հոսանուտք են, որում թթենիք է նշանակ: Իսկ քահանայական տոհմ թէպէտ և աղքատ իցէ, մեծապատիւ է հոգևորօք, և արժան է զուգիլ ընդ թագաւորական տոհմի:

Մխ. ԺԳ. 14.

Բայց այդպէս չէ ժողովրդի հայացքը յեկեղեցականի վրա: Ինչքան ել սա յերևում է դեռ կարգապահ և մեծ ազդեցությամբ ռամկի վրա, ինչքան ել կան նաև իսկական սևազգեստ կրօնավորներ, վորոնք մի անգամ վորո՞շած լինելով հեռանալ աշխարհից, միշտ սգավոր են մնում և նույնիսկ կարճ ժամանակով չեն ուզում ուրախանալ (Մխ. ՃԼԴ, 112), բայց և այնպէս յեկեղեցականությունն ընդհանրապէս ընկած է պատկերանում: Հոգևորականը նույնպէս հափշտակող է, ինչպէս և իշխանը. ուստի նրա դեմ ել պայքարում է աշխատավորությունը, և այդ պայքարն յերևան է գալիս հաճախ ծաղրով:

Հին ճգնավորական խոստակեցությունն այլևս վոչ միայն հարգանք չի վայելում և ազդեցություն չի թողնում, այլ և, ընդհակառակն, ծաղրի առարկա յե:

Դնաժաղիկք և կորնդան և խուրձ՝ առուոյտ կապոյտ և սէզ և նմանք սոցին ծաղր եղեալ զցինկ՝ ասէին, եթէ՛ Զի է զի մեք զուարճացեալք կամք, և նա ծիւրեալ դեղնութեամբ: Եւ լուեալ՝ պտտասխանաց. Վասն զի անմիտք էք և աներկիւղ, ոչ խորհրք եթէ վասն մեր սուրք արեն գերանդեաց, իսկ ես խոկալով յայտոսիկ՝ զարհուրեալ դեղնիմ:

Յայտնապէս ցուցանէ առակս, թէ յոյժ անմիտք են որ մոռանան, եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան. և պատրեալք յերեւելի ի մեծութիւնս՝ ծաղր առնեն զվարս երկընդածս և զկրօնաւորս. ուստի յանդիմանին ի նոցունց անմտութիւն նոցա. և ինքեանք գիտելով զապականութիւն երկրաւորացս՝ ոչ պատրին, այլ ճնշեալ և երկելիւ միշտ ներգեւին:

Մխ. ԼԳ. 39.

Ծաղրում են ուրեմն կրօնավորներին կենցաղավարությունն ասելով,

թե՛ ինչեւ մենք ուրախ ենք և նա հալումաշ Ե յեղել, դեղներ: Ի հարկե Մխիթարի համակրությունը ծաղրողները կողմը չեն, վորոնց նա անմխիտ և համարում: Ծաղրում են կրոնավորները վարք ու բարքը. նրանց գծծու-
թյունն ու ժլատությունը, և նույնիսկ պահանջկոտ են նրանց և վանական-
ները վերաբերմամբ: Աշխարհականները հյուր են գնում աղքատ կրոնա-
վորները մոտ, նրանց նեղելի քարանձաղները, ցույց են տալիս այդ դժվար
տեղերն և մխաթամանակ պահանջում են պարարտ կերակուրներ և խոր-
տիկներ:

Երթեալը ի թոչնոց ոմանք հիւր տատրակի և տեսեալ զնա աղքատ և դժուձ կրօնաւոր,
և ցուցանէին նմա տեղի անձուկ և ի դէպ կրօնաւորութեան. միանգամայն զանազան պա-
հանջէրն խորտակիս, զոր նա ոչ ունէր: Որոց ասաց. Զերկաքանչիւրսդ հակառակ տեսանեմ
միմեանց խորհուրդ:

Զսովորութիւն աշխարհականաց առակս յայտնէ. զի կրօնաւորս տեսեալ, և զտեղի քա-
րանձաւաց նոցա ցուցանեն, և դարձեալ զպարարտ կերակուր պահանջեն: Որոց խորհուրդն
ընդդէմ միմեանց. զի թէ յանձաւս բնակիցեմք որպէս նոքա, զիմիդ զանազան կերակրօք
զնոսա դարմանիցեմք ըստ կամաց նոցա:

Մխ. ձիէ. 107.

Կրոնավորները շատ անգամ բան չեն ունենում տալու. բայց և շատ
անգամ ել պատահում են այնպիսի ժլատ ու գծծի կրոնավորներ, վորոնք
դեղի համար ել բան չեն տալիս, և այդպիսիների գլխին աշխարհականները
խաղեր են սարքում. «Ոչ ետուր դեղոյ, ետուր փորոյ»:

Արջու ցաւեցին որովայն, եհարց զաղուէս դեղ. և նա ասէ. Յայր բարեպաշտ՝ է այս
անուն գեղ, երթիցես անդ՝ և տացէ մեղր որ յոյժ ոգուտ է քեզ: Եւ իբրեւ մերձ եղեւ ի
գիւղն, և շունք անդէն փախուցին: Եւ սկսաւ մեղադրել աղուեսուն: Եւ ասէ աղուէս. Առանց
դպրութեան է այլն, որ զքեզ ի շանցն ոչ աղատեաց՝ և ոչ ետ դեղ, և արդ եկ տարայց զքեզ
առ կրօնաւոր ոմն հմուտ աստուածեղէն բանից: Իբրեւ ետես կրօնաւորն՝ սկսաւ թէնամանել
զնոսա: Եւ աղուէսն եցոյց զմուտ մեղուցին. և արջուն մտեալ՝ զմի եկեր փեթակ, և զմի
առեալ զնայր: Եւ կրօնաւորն անիծանէր զաղուէսն, իբրեւ զպատճառ զնոսուն: Որում ասաց,
եթէ՛ Տմարդութիւն արար քեզ զայդ, ես անպարտ եմ. զի ոչ ետուր դեղոյ՝ ետուր փորոյ. և
ոչ ետուր դեղ:

Աշխարհական իբրեւ զողէտ անփառ մնաց, և ի կրօնաւորէն վրէժ առաւ իրաւացի.
զի յորջտութենէ բազում այսպիսի պատահի զնաս ի նենգաւորաց. առաջնորդութենէ, ի դա-
զանաբարոյ արանց:

Մխ. 2է. 77.

Իրա պատճառն, անշուշտ, կեղծ կրոնավորությունն ե, կեղծ բարե-
պաշտությունը, վոր հաճախ հանդիմանում ե Մխիթարից: Կրոնավորները
կորցրել են իրենց խոնարհությունը (Մխ. ԻԵ, 29). կան այնպիսիները, վոր
մահից վախենալով, այսինքն՝ զինվորական ծառայությունից փախչելով,
ասում են, թե կրոնավոր են, բայց անապատում ապրելու փոխանակ՝ աշ-
խարհում դատարկ շրջում են:

Բազէ գհետ մտեալ աղաւնոյ, և նորա աղաղակեալ ասէ. Պատարադ եմ տէրունի, մի
ինձ մեղանչեմ: Եւ նա ասէ. Պատարադն տէրունի ի տէրունի սեղանն իցէ, և ոչ աստ յօդս
շրջիցի: Եւ հարեալ եկեր զնա:

Դէմք առակիս առ այնոսիկ է, որ ի մահուանէ զանդիտեալ՝ ասեն, թէ՛ զանձինս

տեսան նուիրեալը եմք բնակել յանապատ. զոր ի դեպ իսկ ասէ՝ թէ այդպիսեացդ տեղի կրօ-
նաւորք են, և ոչ վայրապար շրջիլ յաշխարհի. որում ոչ խնայէ, այլ ըմբռնէ:

Մխ. ձժԶ. 99.

Այսպիսի կեղծ կրոնավորներ միշտ ել յեղել են. բայց 12-րդ դարում
դրանց թիվն, անշուշտ, մեծացած ե յեղել, վոր ներսես Ծնորհալին իր Ընդ-
հանրական թղթի մեջ հատուկ ուշադրություն ե դարձնում դրանց վրա:
Դրանք յեղել են «աշխարհասեր և մեղի կրոնավորներ», սիրել են «մեղի
ու լույծ կյանք», ապրել են քաղաքներում ու գյուղերում, մասնակցելով
ամեն տեսակի ուրախություններին. «Ընդ աշխարհականս բնակեն ի գեղս
և ի քաղաքս և ի բանից բերանոյ զարշութիւնս... և յորովայնամուրութիւնս
անպատկառս և յարբեցութիւնս անառակս»:

Յեղել են, հարկավ, և այնպիսիները, վորոնք գնալով լեռը կրոնավո-
րելու, չեն դիմացել տեղի դժվարությանն ու կյանքին և շուտով յետ են
փախել աշխարհ՝ նորից իրենց հին կյանքին: Մխիթարի համակրությունն,
անշուշտ, այսպիսիները կողմն ել չե:

Երթեալ էջ կրօնաւորիլ ի լեռան, և զարհուրեալ ի դառնութենէ տեղւոյն. և զի խրա-
տէին անհեղձ լինել, աղաղակեալ փախեաւ ասելով՝ ի Պառան ի Պառան. իբրեւ զի ջերմին
է Պառան, և յայնմանէ եկն կրօնաւորիլ:

Ի դէպ դոյ այս առակ այնոցիկ, որ յաշխարհէ և յանասնական վարուց գան յանապատ,
և զանդիտեալ ի կրօնից և ի խրատու մշտնանց, դարձեալ դիմեն յաշխարհ՝ յըջելով զառա-
ջին վարան:

Մխ. ձԴ. 91.

Շատ ուժեղ կերպով արտահայտված ե արդեն աշխարհական կյանքի
ձգտումն առակների մեջ: Քահանայության ուսումը, որհներգությունն ու
սաղմոսն այլևս չեն գրավում, զի սուգ և տրտմություն են պատճառում:
Թեպետ դեռ գիտեն, վոր այս աշխարհի տրտմությունը հետո այն աշխար-
հում ուրախություն ե բերում, բայց և այնպէս այդ քարոզին լսող, հե-
տևող չկա: Մարդիկ ավելի սիրում են իրենց հոր արվեստը, ուրախ յերգը,
խաղ ու պարը, «երկրաւոր ուրախութեանց պատրանքը»:

Սարեկ ետ զորդի իւր յուսումն քահանայութեան. և նա ի սոխն և ի միմունջս թե-
ւակոխէր: Եւ խրատէր քահանայն օրհներգութեանց և սաղմոսաց փոյթ առնել, յորմէ սուգ և
զղջումն յողի զործի: Իսկ նա ի պար յաւելոյր, թէ՛ հօր իմոյ արուեստ ուրախութեան է
պատճառ, իսկ քոյդ տրտմութեան: Եւ թէպէտ ուսաւ յետոյ՝ թէ տրտմութիւն այժմուս բերէ
ուրախութիւն յետոյ, սակայն անշուր եղեալ, դարձաւ ի տուն իւր:

Զերկրաւոր ուրախութեանց ըզպատրանս առակս նշանակէ, որով զկատարածն իմանան,
եթէ ի յող վախճանի, որպէս և տէր իսկ ասաց. նմանապէս և հողեւորն սուգ յուրախութիւն
ւանդի:

Մխ. ձԼԳ. 112.

Այսպէս ուրեմն, ինչքան ել տեսականի մեջ դեռ իշխում ե ճգնալորա-
կան հայացքը, գործնականի մեջ, ընդհակառակն, ուրախ կյանքը, աշխարհիկ
վոգին ե տերը: Նույն իսկ միայնակյացը սատանայի հետ պայման ե կա-
պում և նրա ողջությամբ յեղիսկոպոսական աստիճանին հասնելով յեկե-
ղեցին դարձնում ե գուսանական նվագի վայր:

ՈՒՆՏ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՅԻ.

Ասի յառակաց, թէ միակեց մի սատանայի ուխտ եղ, որ տարի մի ի պահս կենայ, թէ զնա ի մեծութուն հասուցանէ: Սատանայ յաճն է առ կատարել զխնդրուածս նորա: Յորժամ վճարեաց զպահսն, շարժեաց զեպիսկոպոս քաղաքըն, որ եղ զնա եկեղեցագան. և ի մշտ տարւոյն շարժեաց որ օրհնեաց զնա արեղայ. և ի մշտ տարւոյն եղև մեռանիլ եպիսկոպոսին շարժեաց զթագաւորն և զքաղաքացիսն առնել իւրեանց եպիսկոպոս: Եւ յորժամ կամէր զգետաւորել, զի ժամ արասցէ, եկն սատանայ, ետ ի նա փոքրիկ չորեքաղի մի և ասէ. Իմ ամէն լաւն փոխարէն, որ զքեզ յայդ մեծադոյն աստուծանդ հասուցը, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ի ծոցդ դըր. և զգետադ ի վերայ հադըր և յորժամ ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ ի վերայ մէկ լաւըն գարի: Եւ այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսն՝ յանկարծակի հազարք հազարաց և բւրբ բւրբոց տասնաղի և թմբկի և սուռնայի և չանկի և չորեքաղոյ ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցւոյն: Զարհուրեցան թագաւորն և ժողովուրդն և ոչ զոք տեսանէին հարկանող նուազարանայն: Հրամայեաց թագաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ և զւրաքանչիւր ոք մերկացուցանել և փնդուել: Եւ այնպէս արարեալ ոչ զոք դուռն պատճառ, և մնաց թագաւորն և եպիսկոպոսն միայն: Թագաւորն ևս մերկացաւ. և ոչ դուռն առ նա ինչ: Եւ յորժամ մերկացուցին զեպիսկոպոսն, դուռն ի ծոցն զչորեքաղոյն այն. և ի չարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւնն և զդաւանս, զոր եղեալ էր ընդ սատանայոյ: Յայնժամ կապեցին զնա ի յագի ամենի ձրոյ և թողին ի դաշտի. մանրամասնաբար կոտորեալ եղև մարմնն նորա. և այնպէս աւանդեաց զդաւանացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Յուցանէ առակս, թէ ով ոք սատանայի բարւոյն և ուխտին հաւատայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է:

Առ. Վարդ. ՄԻԳ. 252.

Պակաս ընկած չե իր զոչաքաղությամբ և քահանայաների դասը: Առակախոսը քահանայաների արդար իրավունքն ե համարում, վոր միայն մեռելները ստացվածքը կողոպուտ անելով ապրեն և վոչ թե իշխանները նման նաև կենդանի մարդկանց ստացվածքը հափշտակեն անիրավությամբ. բայց իսկապես այդպես չի լինում:

Ձաքը ասեն ցճնողս իւրեանց, թէ՛ Ընդէ՛ր նման արծուոյ և բաղէկց՝ կենդանիս մեզ ոչ որսալը, այլ զմեռելոց ոսկերս բերէք մեզ ի կերակուր: Եւ նոքա ասեն. Որդեակը, վասն այն արար զմեզ աստուած երկայնակեաց, զի ոչ զկենդանիս սպանանեմք, այլ շատիմք մեռելօքդ, նման քահանայից՝ և ոչ ըստ օրնակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք:

Արդարապէս վարել մեզ առակս կամի, ճշմարիտ և անկաւոր ընչուք մեռելոց. և ոչ զկենդանեաց անիրավութեամբ յափշտակել, որով երկայնակեաց լիցուք յերկրի:

Մխ. ՃԺԵ. 98.

Քահանաները սուտ ու կեղծ են. ծուլ ին, խարերա, միայն արտաքին ծեսերը կատարող, մատաղի յետևից ընկած: Ազգիսները լափելու համար քահանա յեն դառնում:

Նզիտ աղուէս դիրս ինչ, և զնաց առ տղէտս ոմանս, թէ՛ Քահանայ եմ: Եւ կարեցաւ. քահանայել. և յաւուրս տօնից բարձրաձայն աղօթէր, և յօժարադոյն զաղ օրհնէր, և ի յայլ աւուրսն հեղալը. և ի լինել զենման մատաղոյ, զարիւնն հեա լեզոյր, և ի մեղադիր լինելն՝ ասէ. Նուրեբալ է, և այդպէս արժան է առնել: Եւ ի լինելն յայտնի կեղծավորութեան նորա՝ զնաց դադու:

Մեկնապէս ունի առակս զմիտան. զի կեղծաւորք՝ որ բնաւ չիցեն քահանայք՝ պատրեն գողեսաւ. և թէ միտ զնեն, ի գործոց իւրեանց յայտնեն. և երեւելի լեալ զնան հալածեալք:

Մխ. ՂԸ. 84.

«Հոգեւոր առաջնորդքն... խնամ ոչ տանեն հօտին... այլ զգէրն զենեն և ճարպոյն պարարտանան» (Առակք Վարդ. Բ. 198. ՃԿԷ):

Այսպես և Յիրիկի «Գանգատի» մեջ քահանայի մասին՝

Բախտաւորն դայ ճօճկտալի,
Գայ և նստի յաւադ բարձի.
Հուծն ի փորին ի շուրջ անցնի,
Եւ ալիւռ մը չի դիպնի.
Բայց վասն մէկ աւուր տօնի,
Որ թէ զատիկ, այլ տօն լինի,
Նա խաչհամբոյր իւրն շատ անինի,
Մորթ և էրի և զաթանի:

Քահանաները, ինչպես և յեպիսկոպոսներն ազահությամբ նույն իսկ խոստովանության խորհուրդը դարձնում են յեկամտի աղբյուր, պոռնիկներն և պիղծ մարդկանց նախ յեկեղեցուց մերժում են վախեցնելով, իսկ հետո կաշառքով ընդունում են և հաղորդում: Քահանան նույնիսկ անմեղներին մերժում է յեկեղեցուց. իսկ չարագործներին կաշառքով ընդունում յեկեղեցին (Առ. Վարդ. Բ. 257. ՄԻԳ):

Ի տօնի սրբոյ զատիկին եկին թռչունք ամենայն, և խոստովանութեամբ հաղորդէին օրինացն. եկին ընդ նոսա սաղո և հողամադ, և խոստովան եղեն քահանային, եթէ՛ Ոչ այլ ինչ գիտեմք խնդ, այլ զի որսացաք միոնս և գորտունս՝ և կերաք: Եւ նա մերժեաց զնոսա պիղծ կոչելով: Եւ երթեալ որսացին ձագս սուրբս, և մատուցին քահանային. և այսու պատճառով արդարացոյց զնոսա ասելով. Ոչ գիտացիք խոստովանել, զի այն ծերացեալ և ի թեւոց թափեալ թռչունք էր: Եւ հաղորդեցոյց զնոսա:

Ձաղահ քահանայից առակս տայ տարացոյց, զի զպոռնիկս և զայլս եւս պիղծս մերժեն յեկեղեցւոյ՝ երկեցուցանելով, իսկ յետոյ դարձեալ կաշառք ընդունին պատճառելով բանս ինչ, և հաղորդեցուցանեն զնոսա:

Մխ. ՃԻԱ. 102.

Այսպիսի դրության ժամանակ բնականաբար հաջորդություն պիտի ունենար թոնդրակեցոց աղանդը, վոր ի միջի այլոց մերժում եր յեկեղեցու բոլոր խորհուրդները: Հասկանալի չե, վոր մարդիկ, նույն իսկ հովիւները չցանկանային այլևս հաղորդվել:

Յաւուր զատիկ տօնին եկին հավատացեալք հաղորդել, և զոմն հովիւ բռնադատէին հաղորդել. և տեսեալ ի բաց փախեալ ասելով. Ոչ ճաշ է զի կերայց, և ոչ հրամենք: Եւ ասեն. Այդքան է խորհուրդն: Եւ ոչ հաւանէր առնուլ, այլ ի բաց զնաց:

Զար ամենայն ուստեք առակս ցուցանէ զանդիտութիւն վայրենացելոց ոմանց, զի յերեւելիս միայն հային և զայլազդիկ:

Մխ. ՃԶԲ. 137.

Առակախոս Մխիթարն այդ բացատրում է «վայրկնացած մարդկանց անդիտությամբ», բայց իրականի մեջ այդ առաջացած է յեղի յեկեղեցաւ կանաների բարոյական անկման հետեանքով: Յեկեղեցու այդ խորհրդի ծաղրը յերեւում է առակի պատմվածքից: Նույն ծաղրը տեսնում ենք և մի ուրիշ առակի մեջ, ուր հովիւը զազանները կերածն է աստծուն մատաղ անում:

Ի ձեռաց զահենի յորսալն զերծաւ ձագ հաւբալի, և տոաց. Նզիցի պատարագ տեսնու ծաղր արար զնա հաւբալն, եթէ՛ Զոր ձեռք մատուցանես, այն պատարագ տեսնու:

Ձեռնարկին ձեռագրությանը զբարս՝ առակս, զի զկերակրեալս զազանաց և զբեկեալս զայլոց՝ նուէրս տեառն ասէր լինել:

Մխ. ՃԺԸ. 100.

Այսպես և հին գոհասանական յերգերի մեջ քրիստոնեական տաճարը ծաղրվում է նրանով, վոր սիրականներն իրենց սերը խանգարող աքլորին խորովում, ուտում են ու փետուրները տաճարին նվիրում: Այդ հին յերգերի մեջ կան բավական թվով այնպիսիները, վորոնց մեջ յերևում է անտարբերութուն գեպի յեկեղեցին. ծաղրվում են վանական սարկավագներն ու արեղաները, յեկեղեցու սրբերը, խորհուրդները և այլն:

Վարդանա առակները մեջ ավելի դարգացած է քահանաների ընկած վիճակը. ուստի և սուր յերգիծանքներ են հորինված նրանց վրա: Գող քահանաները յեկեղեցու վոչ մի սրբությունը չեն պահում այն աստիճանի, վոր գողացած կովը տիրոջից թաքցնելու համար նույն իսկ յեկեղեցու սեղանն են բարձրացնում և վարագույրը քաշում:

ԳՈՂ ՔԱՅԱՆԱՅ ՅԵՎ ԱՅՐԻ

Քահանայ մի գողացաւ զկով այրի կնոջ մի և էած ի յախոռն. և կին յիմացաւ, և ասէ առ քահանայն. Տէր, ժամ է մահուան իմոյ. եկ յախոռն, որ խոստովանիմ: Եւ յայն ժամ անցուց զկովն ի ներսի տուն և անդի ի ժամայտուն և անդի եկեղեցին: Եւ ասէ կին. Տէր, առաջի բեմէն պարտ է ասել զմահու խոստովանութիւնս: Եւ հանին զկովն ի բեմն և քարեցին զվարայրուրն ի գէմ: Իբրեւ մտան յեկեղեցին և նստան, յանժամ կին ի վեր կալաւ զվարայրուրն և ասէ ընդ կովն. Ո՛վ դարձելի, զքեզ կով գիտէի. և արդ զքեզ պատարագաւ ո՞վ արար, ասայ ինձ:

Յուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ և իմաստութեամբ պարտ է առաջնորդին և վարդապետին զամենայն ինչ քննել. և ստուգել ամենայն քահանայս և յիմանալ զվարս նոցա և որ չէ արժանի պատարագի, ծածկայբար յանդիմանել և ոչ տալ թուլ կրկին խաչել զորդին աստուծոյ անարժան պատարագաւն և հաղորդութեամբն, որ չէ բարի անարժանութիւն:

Առ. Վարդ. Բ. 73. ԾԴ.

Մենակյացները շնացող են (Առ. Վարդ. Բ. 69), նրանք ել գողություն են անում և գողացած ապրանքը ծածուկ ծախում բոլորովին չնչին գնով, արդարացնելով իրենց, թե Քրիստոս ասել է՝ ձեր առաք, ձեր տվեք:

ՄԻԱՅՆԱՅԵԱՅ ՅԵՎ ՏԱՃԻԿ ԻՇԽԱՆ

Միայեկեց մի եկ ի գիւղ մի քաղցեալ, և ոչ անկեալ նմայ հաց. և ել ի շէնէն և գտաւ դառնիկ իշխանին ձին, որ էր ի գիւղն. և առնու զնայ և տանի ի միւս գիւղն. ետ և էառ հաց մի: Հառաւ իշխանս և ասէ. Ով միայեկեաց, ընդ է՞ր կարի առատ տուեր զծանրաբային ձին իմ ի մէկ հաց, իբրեւ գիւմար: Եւ նայ ասէ. Ով բարի իշխան, մի ընդ վար շատայբաներ, զի Քրիստոս հրամայեաց, թէ՛ ձեր առէք և ձեր տուէք:

Յուցանէ առակս, թէ պարտ է զայս ասել առաջնորդին և վարդապետին առ ժողովրդին, թէ համբերեցէք և մեք տամք զաւրէն աստուծոյ:

Առ. Վարդ. Բ. 73. ԾԴ.

Ագահությունն ու վորկրամոլությունը հոգևորականների, այլ և աշխարհականների ամենամեծ պակասությունն է. 15-րդ դարում Մկրտիչ Նազազը կոչվում է այդ ախտի դեմ իր վոտանավորներով. նույնը գտնում ենք և Վարդանա առակները մեջ:

ԱՐՏՈՒՏ ԹԱԳԱՒՈՐ ԹՈՉԵՆՈՑ

Ժողովեցան թռչունքն և ածին զարտուտն իւրեանց թաղաւոր. զի չէ գիշայկեր. և է արթուն և սաղմոսասաց կարգաւոր: Եւ սահմանեաց միայբանութիւն և կարգեաց զիշխանս և զաւրայալարս. և սկսան զնայ և զան ի գեղջի մի սահման: Եւ տղաքն եղեալն էին որագայթ վասն ձագուրց. և պատահեցաւ որորայթն առաջի արտուտին. և նայ էառ զհատ ցորենոյն. և բախտերքն անկաւ ի պարանոցն նորա. և նայ անշնչացաւ: Եւ եկեալ զաւրացն հանին զբախտերքն ի պարանոցէն և ասեն. Ով բարի թաղաւոր և իմաստուն կարգաւոր՝ սաղմոսասաց արթուն. զի այս որ պատահեցաւ քեզ՝ ի՞նչ էր. եւ նայ ասէ. Ով բարի զաւրք իմ, որ ազահութիւն և յորովայնայմոլութիւնն տարաւ զխեղքս իմ և զիմաստութիւնս. զի խորհեցայ ծածկայբար ուսել զհատ ցորենոյն վասն սովուս իմոյ, զի մի տեսցէ որ ի զաւրաց իմոց:

Յուցանէ առակս, թէ բազում սուրբ կարգաւորք և առաջնորդք կորնչին ի դժոխս վասն ագահութեան և յորովայնայմոլութեան, որով զայթակեցուցանեն զտգէտան և լինին ողորմելիք առաջի Քրիստոսի:

Առ. Վարդ. Բ. 33. ԻԶ.

Այս ամենի հետեանքն այն է, վոր ժողովուրդը սառել է յեկեղեցուց: Այլ ևս ժամասեր չեն: Ավելի սիրով զվարճություն անելու, զվարճալի տեղատեղաների մտիկ տալու յին գնում, քան աղոթելու և քարոզ լսելու:

ԵՐԷՑ ՅԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԻ

Կայր էրէց մի ի գիւղ մի և խիստ սաղմոսասէր. և գեղացիքն ոչ դային ի ժամ. էրէցն երթայր ի տունս նոցա և ասէր, թէ՛ ի ժամ եկէք: Եւ նոքա ասէին, թէ՛ Գամբ: Եւ ոչ դային: Եւ էրէցն օր մի սուտ խե եղաւ և զգաւազանն ի փրկոնին ծայրն ծալեց և ի վեր կալաւ և շուրջ դայր և դոռայր: Եւ ասին գեղացիքն, թէ՛ էրէցն խեցաւ. կրթամք և ծիծաղումք: Ժողովեցան այր և կին և տղայ, մեծ և փոքր և եկին առ էրէցն: Եւ ասէ էրէցն ցփովութեամբ, թէ՛ նստէք: Եւ նստան: Եւ ասէ էրէցն ցփովութեամբ. Ո՛վ մոլորեալք, քանի որ սաղմոսէր և աղաթէի և ժամ ասէի, նա սատանայ կապել էր զսիրտն ձեր և քարացուցել. որ դժար թուէր ձեզ ժամ դալն. և այժմ սատանայ ձայնն եկիք շուտով լսել և ծիծաղել: Եւ բարկացեալ էրէցն ձգեց զփրկոնն և գնաց ի գեղէն:

Առ. Վարդ. Բ. 265. ՄԼԶ.

Մարդիկ այլ ևս հավատքի խնդիրներով չեն զբաղվում. գրեթե սառն և անտարբեր են գեպի այդպիսի վեճերը, վոր միջնադարի եյությունն էին կազմում: Հայտնի պատմական ակի առակի մեջ՝ ճշմարիտ հավատը բնականաբար դեռ քրիստոնյաներին է. բայց դա հոգևորականի տեսակետն է:

ԵՐԵԲ ԹԱԳԱՒՈՐԻ ՎՈՐԴԻԲ ՅԵՎ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ ՅԵՎ ԴԱՏԱՒՈՐ

Ասի ի պատմութեանց, թէ կայր թաղաւոր մի և ունէր բազում ճոխութիւն և Գ. որդի և ակն մի պատուական, որ առնէր բժշկութիւն: Եւ նա ետ նշան որդոց և ասէ. թէ՛ Յետ մահուան իմոյ, որ ունի զակա զայս, նա առնէ զթաղաւորութիւնս իմ: Եւ յորժամ մեռանէր ետ դալն ի միոյ որդոյ իւրոյ: Եւ Բ. որդիքն արարին իւրեանց ապակի ակն ի նմանութիւն տուն դատաւոր մի առնել նոցա դատաստան: Եւ նա առեալ զակն եղ ի վերայ հիւանդին. և յայտնեցաւ ճշմարտութիւնն, և նա ետ զթաղաւորութիւնն այնմ որդոյն, որ ունէր զակն պատուական:

Առակս ցուցանէ զթաղաւորն ամենեցուն աստուած, որ ունի բազում որդիս ըստ արարչութեան և ետ զպատուական հաւատքն քրիստոնէից միայն. թէ որ ունիցի զայս, նայ է ժառանգ արքայութեան ըստ այնմ, թէ որ որ ոչ ծնցի ի ջրոյ և ի հողոյ, ոչ մտանէ յարքայութեան:

թիւնն աստուծոյ: Բայց բազում մարդիկը ունին դձև հաւատացելոց, այլ ոչ ճշմարիտ հաւատն. քանզի այլազգ սքանչելիք ոչ լինին, բայց միայն քրիստոնէից. զի սոքա ունին զճշմարիտ ակն. զի այնով ժառանգեցեն զհայրենի արքայութիւնն:

Առ. Վարդ. Բ. 286, ՄՀԷ.

Ինչքան ել Առաւելախոսն ասելու լինի, «պատմական հավատքը քրիստոնյաներինն է», բայց և այնպես աշխարհականը, նույն իսկ հոգևորականը շատ ել չի հետաքրքրվում դրանով: Առաւել Վարդանա, ՃԽԲ, յեր. 168—172 «Քրիստոնեա և այլազգի, այլ և օրինակ վէճի յաղագս հաւատոյ» առակի և իր վարկանտներէ մեջ դրվում է այն խնդրը, թե վորի հավատն է ճիշտ, հայկ, թէ՞ ուրիշ քրիստոնյաների. հայկ, թէ՞ այլազգու, այսինքն մահմեդականի: Յեւ վատասխանն այն է, թե «12 քրիստոնյա ազգերը» լծված՝ ամեն մեկը հավատի վեհն (վարկանտներէ մեջ՝ քար, լուսեղեն լեռ) իր կողմն է քաշում, բայց վեհը տեղից չի շարժվում:

Այր մի դնալով ի ճանապարհի հանդիպեցաւ արանց, որք զճողպանս կապեալ ի բուն վեմ մի. զի շարժեցեն զվեհն և առ ինքեանս քարշեցեն, բայց յամենեցունց կողմանց քարշէին, կամելով իւրաքանչիւր ոք առ ինքն քարշել և իւրացուցանել: Իսկ քարն ամենեկն անշարժելի մնայր և անխախտ: Ասէ այրն. Ով մարդիկը, եթէ կամիք շարժել զգա ի տեղողջէ իւրմէ, ի միոջէ կողմանէ քարշեցէք, զի շարժեցել. քանզի յամենէ կողմանէ քարշելով զգա շարժել անհնարին է: Բայց նոքա ոչ կամեցան լսել նմա. այլ յամառեալ քարշէին ըստ սովորութեան իւրեանց. վասն որոյ քարն մնայր անշարժ:

Յուցանէ: Վեհն է ինքն Քրիստոս ըստ Դանիէլի և Պօղոսի, իսկ քարշողքն առ ինքեանս քրիստոնեայք. զի իւրաքանչիւր ոք ազգ քրիստոնէից կամի հակառակութեամբ զՔրիստոս առ ինքն քարշել, այսինքն իւրացուցանել. բայց Քրիստոս անշարժ մնայ և ոչ առ մի ոք դնայ, քանզի Քրիստոս ոչ կամի զհակառակութիւն և զընդդիմութիւն հաւատացելոց իւրոց. այլ զսէր և զմիաբանութիւն նոցին, որովք շարժի Քրիստոս առ նոսա:

Առ. Վարդ. Բ. 171. ՃԽԲ.

Այսպես և «72 ազգերն ել՝ ամեն ազգ լուսեղեն լեռ—աստված իր կողմն է քարշում, թե՛ յես եմ առաջ. բայց աստված ամենքինն է և անշարժ»: «Լուսեղեն լեռոն աստուած է, և ՀԲ (72) լուծքն ՀԲ (72) միլիթն է, որ ամէն միլիթ գէմ իւր քարշէ, թէ՛ ես եմ յառաջ և աստուածն ամենեցուն է և անշարժ»:

Այս ամենից, այս ազատախոհութիւնից արդեն շնչում է մի նոր վոգէի, վորով վերջնապես կազմակերպվում է աշխատավոր դասի հայացքը յեկեղեցու և յեկեղեցականի մասին: Նրա համար յեկեղեցականը նույնն է, ինչ վոր ազնվականը: Նա հոգևորականութեան դեմ մաքառելով՝ վերջ ի վերջո իրեն ավելի բարձր է դասում, քան հոգևորականին, թեպետ և չի համարձակվում այնպես կտրուկ խոսել նրա դեմ, ինչպես ազնվականի դեմ: Յեկեղեցականը պատարագ է անում, մեղքի թողութիւն տալիս. բայց նա չի անիլ այդ, յեթե չուտեր աշխատավորի վաստակը:

Բայց վճիռն է ավելի բարձր, հոգևորը, թե՞ մարմնավորը: Կարդանք «Եկեղեցի և ջրաղաց» առակը.

Եկեղեցին պարծեցաւ իր սրբութիւն իւր և ասաց, թէ՛ ես եմ տաճար աստուծոյ և յիս դան քահանայք և ժողովուրդք յաղաւթն մատուցանել աստուծոյ և պատարագ. և հաշտի

աստուած ընդ աշխարհիս. և մեղաց թողութիւն լինի: Յայն ժամ գայ ջրաղացն և ասէ ընդ եկեղեցին, թէ՛ ԶԼՆՅ դու ասես, արդար է և ճշմարիտ է. բայց դու զիմ երախտիքն մի մոռանար. որ զիշեր ու ցերեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քահանայքն և ժողովուրդքն. և ապա դան առ քեզ աղաւթել և երկիր պահանել աստուծոյ:

Յուցանէ առակս, թէ կան աշխարհի մարդիք, որ հանապաղ աշխատին և դատին, որպէս մեղու. և թաղաւորք և իշխանք և ամենայն մարդիք զվաստակս նոցա ուտեն և ապա երթան յեկեղեցին և զաստուած աւրհանեն և յիշեն:

Առ. Վարդ. Բ. 151. ՃԽԶ.

Այսպես ուրեմն նախ մարմինը, ապա հոգին, նախ ուտել և ապա նոր յեկեղեցի գնալ աղոթելու: Կարդանք և մեկ ուրիշ Վարդանա առակներից.

ԱՂՈՒԷՍ ՅԵՎ ԿՍՔԱՎ

Աղուէսն էառ կաքաւ մի ի բերանն և կամէր ուտել դնայ. և ասէ կաքաւն. Աւրհնեալ է աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի զերծանիմ ի յայտ հարեացս. և ապա չեղաւ, աղվէս, դոհացիք զաստուծոյ և ապա ուտես զիս. քեզ մեծ վարձք է: Եւ աղուէսն կըլդու, և հայեցեալ յերկինս և բացեալ զբերանն՝ ասէ. Գոհանամ զքէն, աստուած բարի, որ պատրաստեցի ինձ սեղան բարութեան: Եւ կաքաւն զերծաւ ի բերանոյն և թռաւ եւ ասէ աղվէսն. Ով անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապա գոհանալ զաստուծոյ:

Յուցանէ առակս, թէ զխոստացեալ իրքն մի համարիք քեզ և մի շնորհակալ մարդու լինիս, մենչե առնուս. և թէ ջուր տան քեզ, ի նոյն ժամն ի գողդ առ զինքն, զի շատք ասեն և ոչ տան զասացեալն իւրեանց, ով եղբար, և սուտ լինին:

Առ. Վարդ. Բ. 58. ԽԲ.

Ահա թե ինչին է հանդում մեր միջնադարյան վերածնութեան միտքը մեր առակներէ մեջ. նախ ուտել և ապա գոհանալ աստուծուց:

Յեւ չկարծեք, թե այս գաղափարը միայն մեր հին առակներինն է. դա բուն ժողովրդական հասկացողութիւնն է, վոր տարբեր ձևով արտահայտված գտնում ենք նաև մեր արդի ժողովրդական առակներէ մեջ:

«Աղուիս զկաքաւ բռնից: Կաքաւ ըսաց. «Աղուիս, ի՞նչ տ'էնիս»: Ըսաց. «Ի՞նչ տ'ուտիմ»: Ըսաց. «Փառք տու աստուծն, նուր զի կի»: Ինչ փառք իտու աստուծն, կաքաւ բերնէն թռաւ: Աղուիս դարձաւ, ըսաց. «Ենուտ տուն աւել բլի, ինչ չուր կուշտ չուտը, փառք տա աստուծն (Գ. Վ. Հովսեփյան, Փղբանքներ, Թիֆլիս, 1892, յեր. 30):»

Սոցիալական հարաբերութիւններն են իրենց հիմքում նաև միջազգային հարաբերութիւնները, վոր մի ազգի իշխող դասակարգն ունի մյուսի նկատմամբ: Ուստի առակներէ այս տեսութիւնը լրիվ անելու համար, տեսնենք այժմ, թե ինչպես Միլիթար Գոչն առանձին ուղադրութիւնն է դարձնում հայերի հարաբերութեան «այլազգիներին», այսինքն՝ մահմեդականներին հետ—ինչպես նա իր Դատաստանագրքի մեջ ել անվանում է մահմեդականներին—և ինչպիսի կարծիք ունի նրանց մասին:

Թվում է, թե բուն Հայաստանում թե՞ քրիստոնյա և թե՞ մահմեդական տերութիւններէ մեջ 12-րդ դարում իրար կողքի ապրող յերկու ժողովուրդներէ, հայերի ու սելջուկյան թուրքերի միջև հետզհետե մեղմանում է այն թշնամութիւնը, վոր նկարագրում է Արիստակես Հաստիվերտցին: Կարծես, նրանք իրար հետ միևնույն տեղում ապրելով, կենդանի փոխադարձ ազդե-

ցությամբ, խառն ամուսնություններն և ավելի ևս կրոնական անտարբերության հետեան քով, մի հայրենիքի, մի հող ու ջրի մեկ ընդհանուր ժողովուրդ պիտի կազմեյին, իրար հետ միացած ընդհանուր շահերով: Բայց այդ գլուխ չի գալիս 13-րդ և հետագա դարերի վերվայրումներին հետևանքով և այլ պատճառներով:

Ինչ է մտածում այս մասին Մխիթար Գոշը և առհասարակ յեկեղեցական դասը:

Յերբ իր բանակի մեջ շարժական յեկեղեցի ունենալու համար Զաքարիա զորավարն Անիում ժողով է գումարում, այնտեղ բերում են նաև «մեծ վարդապետ» Մխիթարին: Ահա թե ինչ է ասում Մխիթարը ժողովական յեկեղեցականներին ու վարդապետներին. «Դուք հոգայք վասն ազգիս, զի մի այդպիսի սովորութեամբ խառնեցին ընդ Վիրս, և ես հոգամ վասն զօրավարիդ, զի մի լիցի սա վրացի իբրև զեղբայր իւր, որում սպասեն Վիրք*»: Յեկեղեցականությունն, իր շահերի տեսակետով, վոչ մի բանի, նույն իսկ յերկրորդական կրոնական սովորություններին նկատմամբ զիջող չէր: Յեթե քրիստոնյաների վերաբերմամբ այսպես եր, բնականաբար Մխիթարի համակրությունը չէր կարող լինել հայերի ու մահմեդական թուրքերի այնպիսի բարեկամական հարաբերության կողմը, վորի մասին ասվեց վերևում: Այն ժամանակ, յերբ Զաքարիան, «մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն», սրի ուժով նվաճում եր Հայաստանի «այլազգիներին» մինչև Բագրևադը և հասնում մինչև Արտավիլ, Մխիթարը, վոր նրա խոստովանահայրն եր, չէր կարող անտարբեր մնալ դեպի «այլազգիները»: Նա առականների մեջ հրահրում է հայերի կրոնական զգացումներն և ատելությունը դեպի մահմեդականները, ցույց տալով, թե նրանք չեն կարող միմյանց բարեկամ լինել:

Ազգերն իրենց ցեղական ու լեզվական տարբերությամբ ընդհանրապես իրար դեմ անհավան կերպով կանգնած են յեղել, կամ, ինչպես Ֆրիկը գրում է,

Ուրիշ լեզու ամեն մեկի,

Որ մեկ մեկի ոչ հաւանի:

Այս անհավանությունն ահա կրոնականի մեջ ավելի մեծ ուժով է յերևան յեկել: Ուստի և ազգերի խտրությունը պահելու միջոցներից մեկը հոգևորականների համար յեղել է ուրիշներին կրոնի, կրոնական ծեսերի յեղծումը ծաղրով:

Առականներ Մխիթարի աչքին ամենից առաջ դարձում է «այլազգիներին» լվացումը, վոր նա ծաղրում է: Ըստ Առականների՝ նրանք շատ չարիքներ են գործում՝ իրենց առաջնորդներին՝ մոլլաներին հետևելով կապիաբար, և յերբ մեղադրվում են, մեղքը ձգում են իրենց մոլար առաջնորդի վրա և ասում են. «այլազգի եմ, լուսնամ և սրբիմ»:

* Պարսկաստանի վարդապետ Գանձակեցի. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, յեր. 167.

Նոյն կապիկ զմարում զի լուսնայր, և լուսնայր Նոյն զի ի բարձրաւանդակ ելեալ աղաղակեաց. արար և զայն կապիկ: Իջեալ ետես զի գէշ ուտէր շուն, և սկսաւ կապիկ: Եւ ի մեղադր լինելն ասաց՝ Այլազգի եմ, լուսնամ և սրբիմ: Զի զտեսեալն գործէ:

Պարզ է առական, զի զբազում չարիս տեսանելով գործեն, և լուսնեալ՝ ասեն սրբիլ, զպատճառն ի մոլար առաջնորդն կուտելով:

Մխ. ՂԹ. 85.

Ներսէս Շնորհալիւն արդեն ծաղրում է մահմեդականների այս ծեսը:

Այն որ գործէ զաղտեղութիւն

Զանասելի մարդոյ լեզուին.

Է՛ Ուսուցանէ իւր ժողովին

Գործել ըզնոյն ըզպղծալին.

Եւ քաւութիւն մեղաց նոցին

Օրինադրէ լուսնալին.

Ողորանել ջրով գետին.

Մաքել միայն գերեւելին.

Որով և դորաք՝ որք ի ջրին,

Առաւելուն քան ըզնոսին

(Ողբ Նդեսիոյ):

Մխիթարի առականների մեջ ուրիշ տեղ ծաղրվում է մահմեդականների մատաղը, վորի վրա կուվում են:

Պատարագ գեմման մատուցանել աղաւ կամեցաւ, և զբաղումս հրաւիրեաց, և եկին յօժաբեալք: Եւ գեմումն նորա էր մուկն հնացեալ: Եւ սկսաւ հարկանել, և ապա այլքն և եղեւ պատերազմ. և զբաղմաց զաշնս փորցին, և մերկ զմիմեանս արարին: Եւ սկսան նդովել զպատարագ նորա, և զմատուցողն եւս. և ասաց նոցա, թէ՛ Յաշակերտացն ուսայ ի... զպիղծն մատուցանել, և դարձեալ պատերազմել:

Գիտելի է ամենեցուն առական, զի զգէմս պատարագին ունին պղծոյն...:

Մխ. ձԻԹ. 109.

Կարդանք և այս առակը.

Մեռաւ որդի աղաւառ. և սղաց յոյժ. եկին և բազումք յողբ նորա, և նա ճաշ մեծ յօրինեաց սղաւորացն ասելով. Զայս ի քրիստոնէիցն ուսայ, և ոչ ի յայլազգեաց. զի ժլատեալք ի լաց և ոչ ի հաց կոչեն: Եւ զայս աղաւ արար, զի զբան պատարագին բժշկիցէ:

Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա թիւրս ցուցանէ՝ զսղոյ և զպատարագի և զայլոց եւս:

Մխ. ձԼԱ. 110.

Այսպես ուրեմն «այլազգիներին» բոլոր կրոնական սովորություններն ու կարգերը թյուր են ըստ Առականների: Յեթե նրանք մի լավ բան ունին, ինչպես մեռելահացը, այդ էլ քրիստոնյաներից են սովորել, ասում է Առականները:

Մխիթարն իբրև հոգևորական զեմ է յինում խառն ամուսնություններին: Նա մեծ հոգացողություն ունի, վոր այդպիսի ամուսնություններ չլինեն հայերի և մահմեդականների մեջ:

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ, և խղրեաց զգուստը նորա հարսն ասելով. Դու տուրնջեան քաջամարտիկ ես, և ես գիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւն: Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալ: Եւ ի վրնի հաքսանեացն, ի տուէ լոյս ոչ կարէր տեսնել:

կարծում, սկսում են ապստամբել, այլ և ծաղրել նրան: Այդ ժամանակ քրիստոնյա թագավորն ել չհամբերելով՝ հարձակվում է նրանց վրա և շատերին կոտորում անխնայ:

Զարծիւ աղաչել սկսան թռչունք միանգամայն որ ընդ ձեռամբ նորա, և ասեն. Անյապաղ զհարկ քո տալուք, մի՛ յարածամ զմեզ զարհուրեցուցես: Եւ նա դաշինս եր, և կայր ընդ նոսա խաղաղութեամբ բազում ժամանակս: Եւ սկսան ապստամբել, այլ և այլապէս. և ժողովեալ խորհէին և յիշխանութիւնէ եւս ընկենուլ: Պարծէր և ճընճղուկ, եթէ՛ Յաչո նորա ծրտեալ կուրացուցանեմ: Եւ իւրաքանչիւր զօրութեամբ իւրով պարծէր, և սկսան մարտ եւս դնել: Եւ նորա ոչ տարեալ յարձակեցաւ ի վերայ, և զբաղումս ի նոցանէ սատակեաց: Տպաւորէ այս առակ զդէմս հաւատացեալ թագաւորի և զանհաւատից, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն առնեն, և նոքա ապախտացեալ ապստամբեն, զպատճառս խաղաղութեան ոչ գիտելով. և այլապէս, և պատեբազմ եւս շարժեն, և ալամայ լինին մահ արեւանել նոցա անխնայ:

Մխ. ՃԻԴ. 105.

Ներսէս Շնորհալին արդեն «այլազգիներէ» համար սովորական և համարում ուխտադրուծ լինելը.

Ձուխտն ստէր զոր եղ ընդ նոսին,
Որդէս բնութիւն էր այս նոցին:
(Ողբ Եղեալոյ):

Նրանք սիրում են արյունահեղություն, ասում է Շնորհալին:

Սուրն անողորմ անօրինի
Որ մեր արեանս է ծարաւի,
Որ չէ յադեալ և ոչ յադի
Մինչև ի դալ կատարածի...

Թվում է թե, ըստ Մխիթարի, սուտ յերգումը սովորական է յեղել իր դարաշրջանում ընդհանրապես:

Մկունք համանգամայն հրեշտակա առաքեն առ կատուն և ասեն. Զինչ քեզ մեղանչեմք՝ որ այդքան զմեզ հալածես. զինչ քո ուտեմք: Եւ նա ասէ. Ո՞չ գիտէք, եթէ յայն սակզմեզ դարձանեն մարդիկ, զի զամբարս նոցա մեք պահեսցուք, արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ ըրչեսիք, և ոչ ինչ ձեզ զստեցից: Եւ ձեռն ի դուռն եղեալ երգմամբ հաստատեաց զայս: Եւ մկանցն համարձակեալ՝ կամեցան զանկեալ հատան առնուլ. և յարձակեալ ի վերայ կալաւ զբազումս ի նոցանէ: Եւ ասեն. Ո՞չ ապաքէն երգուաք՝ անկեալ հաճակեալ ի վերայ կալաւ զբազումս ի նոցանէ: Եւ ասէ. Ոչ երգուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի: Եւ ասն իսկ է առակս կեղծաւոր երգուեցողաց, զի և ոչ պայմանի մնան և ոչ ուխտի, այլ ստեն՝ գիպող միայն ժամ գտեալ:

Մխ. ՂԱ. 81.

Բավական է միայն կարգալ Վարդանա առաքելներից մեկին ևս, «Տաճկաց օրէնք», այսինքն՝ մահմեդական օրենք, վորպեսզի տեսնենք, թե ինչպես նրանք, ըստ Առակախոսին, պատրաստ են յերգումը խախտել վորեւ ձևակաշունթ յամբ:

ՏԱՃԿԱՅ ԱԻԲԷՆԲ

Տաճիկ Փախիր մի գէշն փախուցեր էր և այլ ոչ կարէր բռնել: Եւ երգումն արար ի վերայ կնոջ իւր, թէ՛ Գ. տալախ կնիկն պոշ լինի ի յիւրմէ, թէ՛ գէշն բռնէ, հեծնու և այլ իջանէ յիշուէ: Եւ յորժամ բռնեց գէշն և հեծաւ և եկաց ի վերայ իշուէ, շատ մի և յեծե-

դեցաւ և քշէր գէշն և ինքն ի վերայ: Եւ երթայ առ կարգացողին, թէ Փախկայ տան. որ յերբ իջանես յիշուէ և կւնն ոչ թողուի: Եւ ամենեքեան ասացին, թէ՛ Այդ բանդ ոչ կայ Փախկայ: Եւ յետոյ եկեալ մին կարգացող և ասաց, թէ՛ Մի տարեկուս լինիր. այսոր բան հեշտ է. դնա քշէ գէշն ի ծառին տակն և ել յիշուէ ի ծառն և իջլը ի ծառէն ի վար:

Ցուցանէ առակս, թէ այլազգիքն առտուպիք են և բնութեամբ զաւրինացն գործեն. քանզի աւերէնս ոչ ունին, զի անաւրէնք են և յամենայն աւերէնս իւրեանց զառապելս խառնեալ ունին:

Առ. Վարդ. Բ. 174. ՃԽԷ

Մի անգամ, վոր «այլազգիներէ» մասին այս կարծիքը կա կամված, Առակախոս Մխիթարը խրատում է՝ ամենեւին չհավատալ «այլազգիներէն», զգուշանալ նրանցից:

Ողորէր ոմն զխրնշխն՝ ասելով. Արի եկ արտաքս, զի մեծաբեալ պատուեցից զքեզ բազմազան օրինակօք: Եւ նա ասէ. Զիք ո՞չ զքեզ տեսեալ պատուասէր առ այլս, զիւրդ և ինձ լինցիս, ոչ է այդ, այլ զի արեան իմոյ ցանկաս: Եւ ոչ ել արտաքս, զերծեալ ի նմանէ զգուշութեամբ:

Զարթուցանէ զմեզ առակս, ամենեւին ոչ հաւատալ պատիր բանից այլազգեաց, յայտնի ունելով զմիտս յանցիլոց խաբէութեանց առ այլս. զի արեան և ստացուածոց ցանկան քրիստոնէից, և ոչ եթէ պատուեն:

Մխ. ՀԲ. 67.

Այս ժամանակներից են անշուշտ գալիս մեր այն ժողովրդական առածները, վորոնցով վորոշվում են մեր և «այլազգիներէ» հարաբերությունները և զգուշություն է քարոզվում նրանց նկատմամբ:

Մխիթարը մի ուրիշ տեսակ վերաբերմունք էլ է խրատում ընդհանրապես թշնամիների հանդեպ.

Եկեալ աղէ ձկանց առաջի թագաւորին իւրեանց՝ և ասեն. Զի առացեր թէ թշնամիք առ մեզ ոչ դան, և վասն այն ոչ տամք պատեբազմ, անաւասիկ եկեալ մարդիկ որսան զմեզ, և դու վրէժ ոչ առնուս. և սղոցաձկանն հարեալ դնաւ որսորդաց՝ և զբաղումս ընկղմեաց: Եւ զայլս եւս եղեալս պատմէին նմա: Եւ լուեալ զչարացաւ նոցա. և ումեմն ձկան հրամայեաց պահ ունել նաւորդաց, զի մի այնպիսի ինչ պատահիցէ. և զնոսա հաճէր: Ո՞չ գիտէք, ասէ, զի իշխան մեր են մարդիկ կարգեալք յաստուծոյ, և վասն այն հարկ է մեզ լսել՝ զոր ինչ և գործեն:

Հանճարեղս կամի առնել օրինակս զթագաւորս. զի յորժամ հօր որ քան զնորայն իցէ թագաւորութիւն, և կամիցի հարկս պահանջել, յանձն առցէ տալ սխրով, և զընդդմացեալսն խրատեցէ՝ ոչ հակառակել. զի յաստուծոյ կարգավորեալ է՝ տկարի հնազանդ լինել հօրի:

Մխ. ԿԷ. 63.

Ուրեմն հօրերների առաջ հարկավոր է լուել և հարկատու լինել: Մի ուրիշ առակի մեջ խրատում է, թե յերբ թշնամիներին դիմադրել չեն կարող, ավելի լավ է նույն իսկ այդ մասին ժողով չանել և չխորհել:

Աղէ ճընճղկաց հրապարակ եղին խորհել զորսողաց. իսկ ծերունի ոմն ասէ. Մի ժողովք, զուցէ լուեալ զձայն թեւոց թշնամեաց, և թուուցեալ՝ զվատաստութիւն ձեռ յայտ առնիցէք. այլ յեկեղեցիս դնեալ աղօթեցէ՝ առ աստուած: Եւ ոչ լուան. և յանկարծակի ձայն առին թեւոց որսողաց, և լուծաւ երախանն:

Զմեզ խրատէ առակս. զի յորժամ չիցեմք բավական ընդգէմ կալ թշնամեաց, բարի է ոչ ժողովելոյ վասն նոցա տալ կարծիս, և դւրաւ լուծանել յահէ նոցա, և զվատաստութիւն մեր յայտ առնել. այլ խրատու իմաստնոց յեկեղեցիս յաղօթս ապաւինել:

ՀՄԽՀ Կուլտ. պատմ. ինստիտ. աղխ.—4

Մխ. ՃԼ. 110.

Առնենք մի ուրիշ ասակ.

Հարցաւ ընդ թղենի, թէ՛ Զիարդ է զի բազում ոսոս առ երկրաւ տարածանես: Եւ նա
ասէ, Քանզի բազում են թշնամիք իմ, և ես խոնարհիմ, զի մի ոստակոտոր եղեց, և նախ քան
զելանիսն յիս՝ յազեցուցանեմ, և մոռանան զշարու թիւն:

Խրատել զմեզ առակս, խոսարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ ըմբռնալ զանհաշուել թշնամեաց, յորժամ ստնանել ոչ կրեմք. զի շիջանեցին ի դառնութիւնէ բարուց, և մոռացին զչարիս:

Մե. ԺԲ. 13.

U₁₄. 68. 13.

Այս առակի մեջ տրված խրատը, խոհարհու թյուռն թշնամի ներքին առաջ, արդարացվում է նրանով, թե թշնամիները շատ են, և յեթե այդպես չվարվի մարդ, «վոստակոտոր կը լինի»։ ուստի թշնամիների հարձակվելուց առաջ՝ նրանց աչքը պետք է կշտացնել։ Թույլի վարմունքի ուրիշ վերուց առաջ՝ նրանց աչքը պետք է կշտացնել։ «Անջնաս է (հոգու տեսակներն) ցաղակա՞ն խրատներ ել և տալիս նա, «Անջնաս է (հոգու տեսակներն) կետով) դեպող ստույգեամբ ազատիլ ի վտանգէ թշնամեաց, և է անպար» (Մխ, ԶԳ, 74), ինչպես և յերբ մարդ ընկնում է սպանողի ձեռք, կարելի չէ խաբեյուլթյամբ ազատվել բռնի մահից։

Յեկ վերջապես՝ յեթե մեկն իր թշնամու ձեռից փախչում և և մահից ազատվում, հա յերկշտ չե, այլ արի:

Անկաւ ի պատահէ կերողի հատ սխեռան, և այսպէսեցաւ ի բակլայէ որպէս գերկչոտ, որում ասաց, Ոչ եմ երկչոտ, այլ արի:

Յուզման հոսանք, յարաժամ յապահանջաց կենաց մերոց զանգիտել, սակայն արևու-
թեամբ ի նոցանէ փախչել:

ՄԻՍ. ՀԲ. 45.

Ահա ուժեղ թշնամու և առհասարակ ուժեղի հետ թուլյի վարմունքի
յեղանակները, վոր մեր ժողովրդի մեջ յեկել հանգել են այն առածին, թե՛ «Այն
ձեռք, վոր կտրել էս կարում, պիտի պահես դենս ճակատիդ»: Այս առածը,
սակայն, այլազգիների նկատմամբ, ավելի ուշ ժամանակի յե, յերբ հայերը
խիստ ճնշված են յեղել զորեղ հարեաններից և ստիպված են յեղել այդպես
խոհհարվելու, վորի պատկերը շատ ուժեղ հանված ե վարդանա առականրից
մեկի մեջ («Քահանայ և Հագի»): «Երէց մի և խատի մի և խատուն
սե ծառայ մի երթային ի ճանապարհ. և էրէցն ամենեին ոչ խօսէր: Եւ
ասաց խատին. «Քաջիշ, ասա ինձ բան ի գրոց»: Ասաց էրէցն. «Սէտի, նայ
դու Գ հագուց ես հագիր պողպատի և ես մերկ եմ: Ա. զի խատի ես և շարաթ.
Բ. զի մսըման ես. Գ. քու իրաւն իրաւ է և սուտն ալ իրաւ ե»: Նա ասաց.
«Մի ահ կրեր. հանց բան ասէ որ հաւանիմ»... (Առ. Վարդ. Բ. 167. ՃԽԱ).
Ահա թե ինչու ստիպված ե քահանան խոհհարվել դադու առաջ և, ինչպես
շարունակության մեջ պատմվում ե, քրիստոնեություն և մահմեդականու-
թյուն մի հավասար կարգում դնել:

Այս ծայրահեղ խոնարհուկթյունն, ինչպես ասացի, ավելի ուշ ժամանակի յե, յերբ դադին յերեք պողպատի հագուստ եր հագած, իսկ քահանան մերկ եր: Մխիթարի ժամանակ, սակայն, յեթե հայերը մի տեղ թույլ եյին «այլազ-դիներից», ուրիշ տեղերում մեծ մասամբ ավելի ուժեղ եյին զգում իրենց: Ուստի ինչքան եւ Մխիթարը իսաղաղասիբուկթյուն և անհրաժեշտության

առաջ խոնարհել ե խրատում, բայց և այնպես նա չի քարոզում չլուվել, այլ ընդհակառակն, թագավորի համար նա ասում ե. «Թէ հարկաւորի ի թշնամեաց, անարգութիւն է ոչ տալ պատեբազմ» (Մխ. ԿԶ. 63): Ուրիշ տեղ նա ասում ե, թե խոնարհությունն իր չափը պիտի ունենա. խոնարհվելով չպիտի ընկնել գետին և լինել «կերակուր անմտաց»՝ ոչ գիտելով զպատիւ անձին»։ «զի խոհականութեամբ խոնարհին՝ տիրապէս խոնարհութիւն է, իսկ անիմաստաբարն՝ եղծումն՝ ոչ գիտելով զօրինակ խոնարհութեան զժամանակի և զտեղոյ՝ ըստ զանազանութեան» (Մխ. ԼԸ. 43)։ Անիմաստաբար, այսինքն՝ անխելք, անմիտ կերպով խոնարհվելը, ուրեմն, «եղծում», այսինքն՝ ավերում, քայքայում ե պատճառում։ Բացի այդ՝ անձնապատվությունը չպիտի մոռանալ և դրա համար չպիտի վախենալ մահից։

Այս բոլորի հետ գտնուամ ենք շատ վորոշ ու կտրուկ կերպով արտահայտված նաև այն միտքը, թե յերկու չարիքից փոքրագույնը պիտի ընտրել և թե մահն ավելի փոքր չարիք է, քան մշտական տանջանքն ու զրկանքը: Ուստի ավելի լավ է միանգամից մեռնել ու վոչնչանալ, քան հրում ու ջրում տանջվել շարունակ:

Ի հափորդե դերծեալ ի ձեռանէ ոլեռն՝ զնտատեսակ գորով զնտին, և նորա զայրացեալ
տսէ, երթ կերակուր լեր թոհնոց: Որուսէ ասաց, Բաւական է ի կապձիդ ի հուր և ի ջուր
տանջի, ես պարզաբար կերակուր ախորժիմ թոհնոց լինել:

Միտք առակիս այս է. զի միջոց է ընդ տանջանս և ընդ տանջանո, ընդ զրկանս և ընդ զրկանո, յորոց եթէ պատահի, հարկաւոր է զհանդարտագոյնն ընտրել ի հօրտադուէնէն, և ի մեծամեծաց զփոքրագոյնս:

ԻԼ ԽԶ ԿԶ

U₁₄. 107. 46.

Այսպես և Ֆրիկը, թաթարներից հայ ազգի կրած տառապանքները նկարագրելուց հետո, ասում է, թե ավելի լավ է հայերի համար ջնջվել ու մեռնել ու պրծնել, քան թե մշտապես չարչարվել:

Արդ եթէ չենք ինչ պիտանի,
եւ կամ չունինք գործ ինչ բարի...
Նա դու ջընջէ՛ր՝ զմեզ մէկ հետի...

Վերջացնելով սոցիալական հարաբերությունները այս տեսությունը գլխավորապես Մխիթար Գոշի առակների հիման վրա՝ կարծում եմ, թե պարզվեց, վոր 12-րդ դարում Հայաստանում գոյություն է ունեցել աշխատավոր դասակարգի պայքարն ընդդեմ ազնվականություն և յեկեղեցականություն: Առկազեր Մխիթարը, լինելով հոգևորականություն նշանավոր ներկայացուցիչը և բարձր ազնվականություն անձնական բարեկամը, բնականաբար հպտի ձշտությունը և ամբողջությունը տար այդ դասակարգային կռիվի իրական ընդարձակ պատկերը: Բայց թե իրոք յեղել է մի հեղափոխական շարժում, այդ շատ մեկին տեսնում ենք առակների մեջ: Պայքարող աշխատավորության զաղափարներն ու ձգտումները, սակայն, կազմակերպված ձևով չեն յերևան գալիս: Աշխատավորները, լինեն քաղաքացի թե շինական, արդեն յեկել են այն գիտակցություն, վոր իրենք տանջվում են, իսկ ազնվականություն ու հոգևորականություն միայն վայելում են: Նրանք

դժգոհ են իրենց վիճակից, քննում են իշխանների արարքները, տրտնջում են նրանցից, և վերջիվերջո ազնվականներին անպետք և ավելորդ ծանրաբեռնություն են համարում և նույն իսկ յերկիրն ավերողներ։ Մյուս կողմից՝ ինչքան ել հոգևորականութունը ջանում է մարդկանց մեջ կրոնամոլութուն բորբոքել և նույն իսկ նրանց գրգռել ընդդեմ այլակրոն «այլազգիների», բայց և այնպես հոգևորականներից ել դժգոհ են, նրանց ել պարսավում ու ծաղրում են։ Յեկեղեցու վերաբերմամբ անտարբերութուն է յերևում առականների մեջ, և նույն իսկ նախապատվութունը մարմնին է տրվում և վոչ հոգուն։

ՀՀ Ազգային գրադարան



NL0177358

28 DEK 1936

800

62.836